

4(697)

2024

Ֆրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ԱՃԽԱՐԿԻՆ ՄԱՆԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏՔ

Ամեն բան հեշտ է լինել,
ամենադժվարը մարդ լինելն է:
Չովհանճես թունանյան

Դրվատանքի են արժանի այն մարդիկ, որոնց գործունեությունը միտված է երկրի լուսավոր ապագային, որոնց մտահոգությունը իրենց հայրենիքի հետագա ճակատագիրն է ու այդ ճակատագիրը կերտող այսօրվա մանուկները: Ամեն ոք չէ, որ կարողանում է ընկալել այս կարևոր հանգամանքը ու իր ողջ ջանքերը միավորել այդ նպատակն իրագործելու համար: Այսօրվա լուսաշող երեխաները մեր վաղվա օրն են, և ամեն ինչ կախված է նրանից, թե այդ հաջող վաղվա համար մենք ինչ ենք անում այսօր: Այսինքն՝ ամեն ինչ մեծապես կախված է մեր վերաբերմունքից, իսկ ժամանակն էլ ցույց կտա դրա արդյունքը:

Օրերս Արուսյան քաղաքում ականատես եղանք մարդասիրության դրսևորման ևս մի մեծ քայլի, որի նախաձեռնությունը պատկանում է արցախցի մանկավարժ, ֆրանսերենի մասնագետ, ՀՀ տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետ, միևնույն ժամանակ երևանի Հոլի. Թունանյանի անվան հիմնական դպրոցի ուսուցիչ, «Առաքելություն Արցախ» հասարակական կազմակերպության քարտուղար Դավիթ Գաբրիելյանին: Դեռևս Արցախում եղած ժամանակ նա ծանաչված էր իր հայրենամկեր գործունեությամբ: 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով փախստական դարձած հայրենակիցներին աստարում էր, ինչով կարող էր: Իսկ Արցախի ամբողջական տեղահանությունից հետո բազմապատկվեցին նրա մտահոգությունները: Փիշերուզօր մտահոգության առարկան Արցախն էր, իր հայրենակիցները, որ աշխատանք չունեին, և երկրի ապագան խորհրդանշող լույս մանուկները, որ հնարավորություն չունեին ընդգրկվելու նախակրթարաններում: Սոսկալի էր զբաղվածության հարցը: Ու ծնվեց գաղափարը. իրավաբան քրոջ՝ Արուսյակ Գաբրիելյանի հետ (վերջինս վաղուց էր փախագույն այդ մասին) ստեղծել

մանկական զարգացման կենտրոն, որտեղ կընդգրկվեին արցախցի երեխաները, նրանց ծնողները, մանկավարժներ: Մասնակիորեն կլուծվեր զբաղվածության խնդիրը որոշակի շրջանակի համար:

Արցախցի մանուկները բախվել էին նաև մի մեծ խնդրի. նրանց համար դժվար էր շփու-



նը Հայաստանի իրենց հասակակիցների հետ: Առաջ եկան մի շարք բարդություններ՝ կապված և՛ խոսակցական լեզվի, և՛ գրական հայերենով շփման հետ: Այս հիմնախնդիրներով էլ պայմանավորված՝ ստեղծվեց «Արուսյակ» մանկական զարգացման կենտրոնը, որը տեղակայված է Կոտայքի մարզի Արուսյան քաղաքի սրտում՝ երաժշտական դպրոցի հարևանությամբ:

Ամիսներ տևած դժվարին ու տքնաջան աշխատանքի արդյունքում, որի ընթացքում Դավիթ Գաբրիելյանին հաջողվեց ավելի ևս սերտացնել իր կապերը Ֆրանսիայի Արևելյան քրիստոնեական կազմակերպության՝ «Օղվե Դոլյան»-ի հետ (կազմակերպության տնօրեն՝ Պասկալ Գոլմիշ) ու բազմաթիվ հանդիպումներից հետո կյանքի կոչել քրոջ հետ միասին ծրագրած երազանքը:

Կենտրոնի բացման արարողությանը

հրավիրված էին Դավիթ Գաբրիելյանը, որը կենտրոնի համահիմնադիրներից է, Երևանի Հոլի. Թունանյանի անվան հիմնական դպրոցի փոխտնօրեններ Ալվարո Վահրամյանը, Գայանե Վարդանյանը, դպրոցի նախկին ղեկավար Ալինա Մովսիսյանը, բանաստեղծ Բորիկ Բաղդասարյանը, ՀՀ տեսչական մարմնի ղեկավար Վաղարշակ Մատիկյանը, տեսչական մարմնի հանրակրթության վարչության պետի տեղակալ Արմեն Վիրաբյանը, Արցախի «Լուսարար» թերթի խմբագիր Սվետլանա Խաչատրյանը:

Հմայիչ հաղորդավարուհի Շուշան Քոթանյանի ծայրի հաջողի ելևէջներով հայտարարվեց միջոցառման բացման մասին, ու հնարավորություն տրվեց հրավիրված մարդկանց՝ արտահայտելու իրենց սրտի խոսքը:

Մանկավարժ Ալինա Մովսիսյանը նշեց, որ մարդկային բարության շնորհիվ միայն իրագործվեց այդ ամենը: Այսօր ավելի քան երբևէ բոլորիս խիստ անհրաժեշտ են բարեգթությունը, միասնությունն ու մարդկայնությունը: Իրոք, իզուր չէ Մեծն Թունանյանն ասել. «Ամեն բան հեշտ է լինել, մարդ լինելն է միայն դժվար»:

Զարգացման կենտրոնի աշխատող Տաթև Բախչիյանն իր շնորհակալական խոսքը հղեց կենտրոնի տնօրեն Արուսյակ Գաբրիելյանին և բոլոր բարի մարդկանց այդ լույսի օջախը բացելու համար, քանի որ դրանով հնարավորություն կտրվի արցախցի երեխաներին պահպանելու մեր գեղեցիկ ու հնչել բարբառը, հոգուն էլ միշտ վառ պահելու այն ամենը,

ինչ որ արցախական է: Մի խոսքով, կենտրոնի առաքելությունը բազմաթվանդակ է, իսկ ամենագլխավորն այն է, որ ստեղծվել է՝ Արցախն ապրեցնելու համար:

Ներկաներից Արմեն Վիրաբյանը, ողջունելով իր համաքաղաքացիներին ու արցախցիներին, ընդգծեց այն փաստը, որ իրականության մեջ հենց արցախցիներն են ամենաբնիկ հայերը, և Դավիթի ու Արուսյակի այդ կարևոր քայլը շատ զնախատելի է, դրվատանքի արժանի, և այն պետք է վարակիչ դառնա Հայաստանի տարբեր քաղաքների համար: Միակցանկությունն էլ այն է, որ Արցախի այդ երեխաները հաջորդ տարի իրենց բնօրրանում հաճախեն այդպիսի կենտրոններ:

Արուսյանի «Մայրերի ակունք»-ի ղեկավար Մոնիկա Համբարձումյանը, անդրադառնալով



բոլոր հանգամանքներին, նշեց, որ տիկին Արուսից հսկայական ջանքեր են պահանջվել՝ իր երազանքի իրագործման համար, և հաջողություններ մաղթեց հետագա գործունեության մեջ:

Տեր Մաշտոց քահանայի օրհնությամբ ու աղոթքով բացվեց միջոցառումը, իսկ կենտրոնի բացման կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց տիկին Արուսին՝ սաների հետ միասին:



ԱՅՍԵՂ ՍԻՐԵԼ ԳԻՏԵՆ

«Խնդրում եմ իմ որդուն՝ - ին, ընդունել Ձեր դպրոցի 9-րդ դասարան»:

Ներքին դրող խանգարում էր գրել: Ընդամենն օրեր առաջ որդիս ԱՀ Ասկերանի շրջանի Խնապատի միջնակարգ դպրոցի սան էր, իսկ ես՝ նույն դպրոցի 20 տարվա մանկավարժ:

Նախապես ինքս ինձ տրված չլացելու հրաման ունեի, որն ի կատար ածելու համար մեծ ճիգեր էր պահանջվում:

«Եվս մի սիրուն արցախցի տղա ավելացավ իմ դասարանում», - գոհունակ տոնով արտաբերում է ներս մտած ուսուցչուհին:

Մայրական ինքնասիրություն շոյող խոսքերից գոտեպնդված՝ բարձրացնում եմ թղթին հառած աչքերս: Այն, ինչ տեսնում եմ դիմացինի աչքերում, վայրկենապես տապալում է ինձ: Վստահ կեցվածքն անգոր էր քողարկել հոգու կակիծը: Թաց աչքերը մատնում էին:

Հարցնում եմ. «Ինչպե՞ս Ձեզ դիմեմ»:

«Ընկեր Մարինե,- ասում է տղայիս նոր դասղեկն ու շարունակում, - Հայկար արդեն դասարանում է»:

Հայկա...Այդ ստացական ս հողն էլ հենց տեղում վճռում է ամեն բան:

Առանց ավելորդ պերճախոսության ընկեր Մարինեն ինձ հասկացնել տվեց. «Հայկը նաև իմն է, իսկ Հայաստանը՝ նաև քոնը»:



Իմ տունն անտեր թողած աշխարհի տերեր, ես մենակ չեմ: Ինձ հետ են ընկ.Մարինեն և Ստեփանավանի Վ. Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոցը:

Արդեն 7 ամիս է, ինչ իմ երեխաները հաճախում են այս դպրոց: Օր օրի համոզվում եմ, որ Ամենայն հայոց բանաստեղծի հայրենի Լոռին մի մեծ բաբախող սիրտ է՝ լեցուն սիրով ու մշտաբուն խղճով: Կարող

եք պատահականության սկզբունքով զանգել թիվ 6 դպրոցում սովորող արցախցիների ծնողներից ցանկացածին: Վստահեցնում եմ՝ իմ տեսակետը կապշտպանի նրանցից յուրաքանչյուրը. մեր զավակները դասի են գնում ուրա-

խույս տալով սպառվել: Բավական է դիտարկել ընկ. Մարինեի հրավիրած ծնողական ժողովները, որպեսզի պարզ դառնա, որ դպրոցում առողջ մթնոլորտ է: Որպես ուսուցիչ-ծնող՝ ինձ իրավունք եմ վերապահում ասել, որ Ստեփանավանի թ. 6 դպրոցը բացառիկների շարքին կարելի է դասել: Անառարկելի փաստերն են այդ մասին խոսում. խաղաղ դասամիջոցներ՝ առանց



հրմշտոցի ու անվայել լեքսիկոնով վիրավորանքների, ժամանակակից դասեր, որոնք ենթադրում են աշակերտակենտրոն, բայց ոչ անկառա-

վարելի պրոցես, ուսումնական օր՝ հագեցած տարաբնույթ միջոցառումներով, սովորողների համար անվտանգ միջավայր ապահովելուն ուղղված հետևողականություն: Հատկանշական է, որ կրթական համակարգում հաճախակի տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում դպրոցը կարողանում է հետ չմնալ մրցակազմից: Այս հարցում անվիճելի է ուսումնամեթոդական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Նարա Միկոյանի դերը: Տիկին Միկոյանը կարողանում է ստեղծել մրցակցային միջավայր, որտեղ պարտվողներ չկան: Թեքեյանցիները համագործակցել գիտեն:

Եվ, այնուամենայնիվ, ծնողի համար ամենակարևորը իր զավակի փայլող աչքերն են: Իմ երեխաները ամեն օր տուն են մտնում ժպտալով ու չեն զլանում ամեն անգամ տալ նույն հարցը. «Մամ, քիմյան չընք, չէ՞ Ստեփանավանա»:

Այստեղ մեզ չեն հերոսացնում: Այստեղ մեզ չեն մեղադրում: Այստեղ մեզ ընդունում են այնպիսին, ինչպիսին կանք՝ մեր ապրած ողբերգությամբ ու ապրելու մեծ տենչով: Այստեղ սիրել գիտեն:

Մեդիա ՄԵՇԼՈՒՄՅԱԼ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՎ

Հայաստանը մի որևէ աղետյալ չէ, Այլ մի բարձր աղետյալ, որ առողջանալով՝ շատ բան ունի տալու մարդկությանն ու աշխարհին:
Հովի. Թումանյան

«Ողջունում եմ ձեր մուտքը Հովի. Թումանյանի թանգարան: Հայերի ու ֆրանսիացիների միջև ինչ-որ անբացատրելի, առեղծվածային կապ գոյություն ունի, որը կարելի է ջերմ ու բարեկամական համարել:

Ֆրանսիական իրականության հետ շփվել եմ հենց ձեր տարիքում Ֆրանց Վերթելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի միջոցով: Հետո՝ ուսանողական տարիներին, խորացրել եմ գիտելիքներս ֆրանսիական գրականության պոեզիայի ու արձակի շրջանակում՝ ազատորեն ընթերցելով նշանավոր գրողների հանրաճանաչ երկերը: Օրինակ՝ ժան Պոլ Սարտրի միջոցով ես պարզել եմ ինձ համար, թե ինչ է ազատությունը, ինչ է ազատ ապրելը: Համոզված եմ, որ այսօր ֆրանսերենով ոչ նվազ հետաքրքրությամբ կըմբռնվենք մեր գրականության Անհաս բարձունքի՝ Հովիանյան Թումանյանի 155-ամյակին նվիրված ձեր միջոցառումը»,-

ողջույնի այս խոսքերով դիմեց թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը Երևանի Հովի. Թումանյանի անվան հ.32 հիմնական դպրոցի ժամանած աշակերտներին ու մանկավարժներին: Նրանք եկել էին Մեծ Լոռեցու ծննդյան 155-ամյակը նշելու երթարական ֆրանս ժողովրդի մայրենի լեզվով: Երեխաները շատ ուրախ էին ու ոգևորված: Դահլիճը, համակ լուսություն դարձած, վայելում էր «Կիկոսի մահը» հեքիաթի բովանդակալից հունորը բարեկամ ժողովրդի սիրո լեզվով, որը դպրոցի աշակերտները ներկայացնում էին սահուն ու հնչեղ՝ հանդիսատեսի ջերմ ծափահարությունների ներքո: Մեծանուն գրողը անգամ ֆրանսերենով է հասկանալի հայ ունկնդրին: Երբեմն հեքիաթի որոշ հատվածներ հնչում էին հայերեն՝ վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ, բալա ջան...

Սովորողները նաև երաժշտական համարներ էին պատրաստել. հնչեց «Ախթամար» երգը համաձայն լեզունից, հետո փոքրիկ նախուհին ֆրանսիական երաժշտության ներքո ներկայացրեց իր նագանի ու հեզանկուն պարը, որի մեջ արտահայտության ձևը ֆրանսիականն էր, բովանդակայինը՝ հայկականը:

Լուսինե Արագոն, ժան Պոլ Սարտր, Ֆրանսուա Մորիակ. սրանք այն հեղինակներն են, որոնց ստեղծագործությունները հայ ընթերցողների հետաքրքրությունների հագեցման աղբյուր են դարձել: Հովի. Թումանյանը թարգմանել է Ալֆրեդ դը Մյուսեի «Լյուսինե» բանաստեղծությունը: Լուսինե Արագոնի «Կարմիր աֆիշ»-ը նվիրված է Ֆրանսիայի Ազգային հերոս Միսաք Մանուշյանին: Արագոնի միջամտությամբ է Սերգեյ Փարաջանովը բանտից ազատվել, իսկ 1955 թվականին հրապարակած մի

հոդվածում, որը նվիրված է հայ գրականությանը, նա բարձր է գնահատել Ավետիք Իսահակյանի և Եղիշե Չարենցի ստեղծագործությունները:

Սարտրյան «Գրականությունը մարտի է մղում» միտքը ի մի է բերում կարևոր մի հանգամանք. հայ-ֆրանսիական մշակույթային համագործակցությունը դարերի պատմություն ունի:

Թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը վերջում շնորհակալություն հայտնեց երեխաներին ու նրանց մանկավարժներին՝ Երևանի հ. 32 դպրոցի տնօրեն Քնարիկ Պետրոսյանին, Լուսինա Հովիանյանին և արցախցի մանկավարժ Դավիթ Գաբրիելյանին (նրանք երեքն էլ ֆրանսերենի լավագույն մասնագետներ են, իսկ Դավիթ Գաբրիելյանը Արցախից տեղահանվելուց հետո աշխատում է նաև Կրթության որակի ապահովման տեսչությունում՝ որպես ֆրանսերենի տեսուչ): Նրանք զգալի աշխատանք են կատարել առ Մեծն Թումանյան, և հուրախություն նրանց՝ տիկին Ղարախանյանը հայտնեց, որ շուտով հեռախոսային հավելված է շրջանառվելու՝ Թումանյանը ֆրանսերենով, ու հետագայում դպրոցներ շրջայցերի շրջանակում իրենք կծանոթացնեն այդ հավելվածին, որպեսզի նրանք կարողանան օգտվել դրանից:

Վերջում, ամփոփելով միջոցառումը, տնօրեն Լուսինե Ղարախանյանը, թանգարանի խորհրդի որոշման համաձայն, Թումանյանի հուշամեդալով պարգևատրեց Երևանի Հովի. Թումանյանի անվան հ.32 հիմնական դպրոցի տնօրեն Քնարիկ Պետրոսյանին, որը մեզ համար մի նոր բացահայտում դարձավ. նա Հովի. Թումանյանի քրոջ՝ Իսկուհու թոռնուհին է՝ գերդաստանի սերունդներից մեկը, որը, շնորհակալություն հայտնելով թանգարանի աշխատողներին, ավելի պարտավորված զգաց՝ այսուհետև ևս կցվելու հայ գրականության հսկայի՝ Հովի. Թումանյանի կյանքն ու գաղափարները տարածելու գործին:

Պարգևատրվեցին նաև միջոցառման համար անսահման ջանքեր ներդրած մանկավարժներ՝ արցախցի Դավիթ Գաբրիելյանը (Թումանյանի հուշամեդալ), Լուսինա Հովիանյանը (շնորհակալագիր), հաղորդավար աշակերտները (շնորհակալագիր և «Թումանյանը՝ հայերեն-ֆրանսերեն» գիրք):

Շատ շնորհակալ ու հայրենավեր աշխատանք են կատարել Հովի. Թումանյանի անունը կրող հիմնական դպրոցի ֆրանսերենի մասնագետներ Քնարիկ Պետրոսյանը, Դավիթ Գաբրիելյանը և Լուսինա Հովիանյանը: Բարի գործերը միշտ բարի հունդեր են տալիս, բազում հաջողություններ նրանց հետագա գործունեության ընթացքում:

Մշակութային այս օջախն էլ միշտ աչքի է ընկել իր գործունեությամբ ու այցելուների հանդեպ ունեցած սիրալիկ վերաբերմունքով, ինչն ավելի է կրում ջերմ հարաբերությունները այցելուների և թանգարանի աշխատողների միջև, ու հյուրերը միշտ հեռանում են գոհ ու բավարարված:

Թումանյանի մեծարման ու զնահատանքի միջոցառումները շարունակվում են:

Եվ անշուշտ մի օր, հանդերձյալ կյանքում, Երկրում թե այլուր, վերև՝ երկրնքում, Էն անհայտ ճամփով, որով նա զընաց, Ես էլ կըթռչեմ՝ աշխարհը թողած, Ու կըզգամ նըրան, կապրեմ նըրա հետ

Մի ուրիշ անվե՛րջ կյանքով երկնավետ...

«Դեպի անհունը»



Սուրբյա ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՅԽԱՐՀԻՆ ՄԱՆԿԱՆ ՄԱՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԵՏԸ

1 **Ձարգացման կենտրոնի մանկավարժներից Անուշ Մովսիսյանը որոշակի մանրամասներ հաղորդեց կենտրոնի գործունեության մասին:** Նշեց, որ նախադրարանում առայժմ ընդգրկված են 14 արցախցի երեխաներ, որոնք հաճախում են անվճար հիմունքներով, և նախնական ստեղծվել է կրտսեր և ավագ տարիքային երկու խումբ: Երեխաները, դաստիարակները, մանկավարժները Արցախից տեղահանված մարդիկ են:

Հետագայում կենտրոնը կգործի նաև տեղացիների համար՝ վճարովի հիմունքներով: Աշխատողների աշխատավարձը հոգալու է հովանավոր կազմակերպությունը:

Կենտրոնում ուսուցումը իրականացվում է ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից հաստատված ծրագրերով, չափորոշիչներով՝ երեխաների տարիքային առանձնահատկություններին համապատասխան: Դասավանդելու են հայոց լեզու(մայրենի), մաթեմատիկա, անգլերեն, երգ-երաժշտություն առարկաները, աշխատելու է նաև հոգեբան:



Հունիս ամսից գործելու է ամառային դպրոց երկարօրյա խմբերով՝ 6-12 տարեկան երեխաների համար: Կազմակերպվելու են էքսկուրսիաներ առօրյան ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով: Աշխատելու են համապատասխան առարկաներից մասնագետներ, հոգեբան, գործելու է կավագործության խմբակ, նաև առկա է ավագաթերապիայի սենյակ: Ամառային դպրոցի գլխավոր նպատակն է 2023-2024 ուստարում երեխաների ձեռք բերած գիտելիքների ամրակայումը, ամառային առաջադրանքների կատարումը և գիտելիքների խորացումը ըստ առարկաների: Ընդգրկվելու են ոչ միայն արցախցի, այլև Արևմտյանում բնակվող տեղացի երեխաները:

Սեպտեմբերի 1-ից հնարավոր կլինի վճարովի հիմունքներով ընդունելություն կազմակերպել տարիքային շենն իջեցնելով. կընդգրկվեն ոչ միայն 3 տարեկանը լրացած, այլև ավելի փոքր տարիքի երեխաներից մինչև 6 տարեկանները:

Կենտրոնն ունի բացօթյա մեծ խաղահրապարակ, որին կից գործում է լողավազան, որից ամառվա ընթացքում կօգտվեն և՛ ամառային դպրոցի, և՛ կենտրոնի սանե-րը:

Ձարգացման կենտրոնի բացման արարողությանը հրավիրված հյուրերից շատերը, որոնք անձամբ ճանաչում էին տնօրեն Արուսյակ Գաբրիելյանին իրենց դրվատանքի խոսքն արտահայտեցին նրա հասցեին՝ իր հայրենավեր գործունեության համար: Վերջում հաղորդավար Շուշան Քոթայանը ներկայացրեց միասնական պարի հրավիրեց: Հնչեց հայկական «Քոչարին», ուս ուսի տված պարահրապարակ մտան մեծ ու փոքր, որ հայի միասնական ոգին վեր հանի, ավելի ամրանան ու սարեր շուռ տան: Բոլորիս փափագն է՝ մեր հայ ազգին տեսնել միասնական, համախմբված և ուժեղ: Բոլորիս այսօր դա է պակասում:

Երեխաների ավերի մեջ է մեր երկրի ապագան, նրանցից յուրաքանչյուրի ժպիտի մեջ է ամփոփված մեր կյանքի իմաստը: Ամեն ինչ պետք է անել այդ ժպիտը չպակասեցնելու համար: Մեր երեխաներին մաղթենք՝ բարով վայելեն այդ նոր հաստատությունը: Թող այնպիսի հրաշք կատարվի, որ այդ երեխաները Արցախում հաճախեն նման կենտրոններ՝ հոգեկան խաղաղություն բերելով բոլորիս:

Նորաբաց «Արուսյակ» կենտրոնի տնօրեն Արուս Գաբրիելյանին էլ ավելի մեծ ուժ ու եռանդ մաղթենք սկսած գործը հաջողությամբ իրականացնելու համար:

Թող բախտը ժպտա մեր հայրենակիցներին:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ՌԻՍԻՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Լուսինե ՂԱՐԱՆՆԱՅԱՆ

Հովհաննես Թումանյանի բանգարանի տնօրենի ԺՊ, Հոգեբանական գիտությունների թեկնածու

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՆՇՈՒՆԸ



Աստված, տիեզերք, երկինք, հավերժություն, արև, աստղ, ամպ, լույս, Սիրիուս, Արուսյակ և անհունին առնչվող, տիեզերական խոհեր գաղափարանշող այլ եզրույթներ շատ են շրջանառվում Թումանյանի ստեղծագործություններում, ընդ որում՝ խոսքը ստեղծագործական տարբեր ժամանակափուլերի մասին է: Ինքնաճանաչողության խնդիրն Ամենայն հայոց բանաստեղծին հաղորդակցության մեջ է դնում տիեզերքի հետ՝ հոգեբանական մոլորակում և մերձեցում, հուզական ապրումակցում, վերագրումներ և առաջածգումներ, ներհայեցողություն, որ ճառագայթում է դեպի անհունը և այլն. «Նայեցի տիեզերքի մեծությունը, սուզվեցի նրա անեզրության մեջ... Հասու եղա աստղերի կյանքին ու մարդու ոչնչությանը: Նայեցի բնությանը և նրա բոլոր արարածներին: Եվ ինչո՞վ է պարծենում մարդը. նա մինն է նրանցից, և ուրիշ ոչինչ... Նայեցի մարդուն իր ծննդյան օրից մինչև մահը... ամեն դիրքի վրա, նա է միայն բարձրը, որ կանգնած է իր ոտքերի վրա, նա է միայն գեղեցիկ, որ լուսավորված է իր սեփական լույսով, իր ներքին լույսով լուսավորվում է իրենից»: Ըստ էության, տիեզերքի անաղարտության ու մեծության խորապատկերին նաև հակադրվում է մարդ-մահականացուի փոքրությունն ու մեղավորությունը:

«Իմ կրնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սըրբազան» սկզբնատողով քառյակը, որ կարելի է համարել բանաստեղծի «ծննդյան վկայականը», մի բազմիմաստ կտավ է, որը բովանդակում է ամենայն հայոց բանաստեղծի առաքելության խորհուրդը.

Իմ կրնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սըրբազան,

Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.

Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,

Ու կընքողըս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Ժամանակի ընթացքում տարբեր ժանրային ստեղծագործություններում բանաստեղծի գոյութեմաբանական խոհափիլիսոփայությունն ապրել է ներքին զարգացում, և այդ ճանապարհին առավել նշանավորվում է գոյութեմական ընդվզումը.

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.

Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.

Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,

Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին:

Տիեզերքը դառնում է ապրելու արժեքաբանական համակարգի որոշակիության տարածք, և սահման հասկացությունը կատարելության իմաստ է ստանում: Տիեզերքին առնչ-

վող բոլոր բանաստեղծություններում և քառյակներում Թումանյանը գոյաբանական առումով գերազանցում է ինքն իրեն ու աշխարհին՝ իշխելով գաղտնախորհուրդ տիեզերքի վրա: Եվ այդ ինքնահաղթահարումներն ինքնանպատակ չեն. նա «հոգու անհունի հրճվանքով» հաստատում է բարձրագույն արժեքների գոյությունը՝ գերադասելով դրանք մարդու անձնիշխանությունից ու չարությունից.

Վերանում է վեր հոգիս զրվարթուն-
Չըկա մոտ ու տար, չըկա վեր ու ցած,
Տիեզերքն ամբողջ հայրենիք ու տուն,
Ու ես մի ազատ՝ անտարբեր Աստված:

Երկինքը՝ որպես գոյութեմական տարածք, Հովհաննես Թումանյանին հրապուրել է մանկուց, երկինքը նրա ներքին ուսուցիչն էր (գուցե նաև անհունի հետ հաճախակի առերեսումից էր այդքան բյուրեղային, պարզ և էպիկական՝ անձնական կյանքում թե ստեղծագործությունների մեջ). «Պատանի ժամանակ սիրում էի մեր հանդերձում ու բլուրների վրա, ծառերի տակ մեքքիս վրա պառկել ու ժամերով խորասուզվել երկնքի մեջ կամ բնության: Թռչելու տրամադրություն ունեի միշտ, և ինձ թվում էր միշտ, թե կարող եմ օդում թռչել, էնպես թեթև էի զգում, և այժմ էլ ինձ թվում է, թե թռչում էի կամ թռել եմ: Գիշերների լռության մեջ միշտ ականջ էի դնում Դեբեդի ձայնին, որ գալիս էր խոր ձորից երբեմն խուլ ու խոր, երբեմն պարզ ու ահավոր: Եվ կարծես խոսում էր հոգուս հետ: Իմ մեծ ուսուցիչը՝ Դեբեդի վշտը, աստղալի երկնքի տակ քնելը և հանդերձում մենակ կանգնում պառկելը ժամերով՝ երկնքի մեջ խորասուզված հայացքով»:

Նվարդ Թումանյանի հուշերում ընթերցում ենք. «Սի անգամ ասաց գրույցի միջոցին. «Անհունության գաղափարը մեծ գաղափար է. մի ժամ մտածելը շատ ծանր բան է՝ խելագարության հասցնող բան... Մարդիկ սովորություն չունեն երկնքին նայելու, մինչդեռ շատ է կարևոր...»: Տիեզերքից էր խոսում, կյանքի ու մահվան գաղտնիքներից, կյանքի ունայնությունից, գոհունակության զգացումից, արևելքի իմաստուններին էր մտաբերում. «Լավ է ասում Օմար Խայամը՝ ...ի՞նչ ենք մենք, ի՞նչ է մեր կյանքը ես ծով օվկիանոսում՝ մի հյուլե անցնող»:

Տիեզերքի անհունության հետ խորը նույնացումները ընդարձակում էին բանաստեղծի հոգեկան աշխարհի սահմանները, խորացնում իմացական դաշտը. «Յոթ-ութ տարեկան հասակում նա «եզնարած» էր, բայց քանի որ շատ երազկոտ երեխա էր, եզները միշտ կորցնում էր: Տանում էր հանդ, բաց էր թողնում, ինքը մի քարի գլխին մատնում կամ մի ծառի տակ պառկում և անձնատուր էր լինում իր երազներին: Ժամերով հիանում էր վերջալույսի վարդազույլ ամպերով, Չաթինդաղի գլխին ամպերի խաղով, նրանց դանդաղ ու սահուն ընթացքով և երազում... Պառնում էր ձորափին, լսում Դեբեդի վշտը, թռչունների ծվծոցը, ծղրիղներին, իսկ ուշ երեկոյան պառկում էր բաց երկնքի տակ, նայում աստղազարդ երկնքին ու մտածում, երազում»:

Երկնքի, աստղերի ու տիեզերքի հետ ներքին հաղորդակցումից են ծնվում, ինչպես նշեցինք, Թումանյանի վիպական մաքրությունն ու ներդաշնակությունը: Բանաստեղծական յուրաքանչյուր մենախոսություն կամ երկխոսություն անմիջականորեն ունի խոսակից, և խոսակիցը մի դեպքում տիեզերքն է, մյուս դեպքերում՝ երկինքն ու աստղերը: Նվարդ Թումանյանը գրում է. «Առանձնապես սիրում էր Սիրիուսը և Արուսյակը, նրանց փայլն ու գույնը: Հաճախ մթնշաղիմ արթնացնում էր մեզ, որ մենք էլ տեսնեք Սիրիուսի հիասքանչ առկայծումը կամ Արուսյակի հրաշագեղ փայլը: Մենք էլ սիրեցինք աստղերը, և ամեն մեկս մի աստղ էինք ընտրել: Սիրիուսը, մյուսը՝ Արուսյակը, որը աստղերից ամենափայլունն էր: Սիրիուսը և Արուսյակը, որոնք աստղերից ամենափայլունն էին, որոնք աստղերից ամենափայլունն էին, որոնք աստղերից ամենափայլունն էին»:

առկայծումը կամ Արուսյակի հրաշագեղ փայլը: Մենք էլ սիրեցինք աստղերը, և ամեն մեկս մի աստղ էինք ընտրել մեզ համար. մեկս՝ Արուսյակը, մյուսը՝ Սիրիուսը, Օրիոնը և այլն: Հայրիկի այդ ոգևորության արգասիքը եղան «Արուսյակ» և «Սիրիուսի հրաժեշտը» բանաստեղծությունները»:

Բովանդակային ուշագրավ գաղափար կա «Արուսյակ» բանաստեղծության մեջ. Արուսյակը պետք է զա և զարկի «չարին ու չարքին», հալածի մութը: «Լույս ցերեկը պետք է հորդա» և դառնա արդար ու ազնիվ համակեցության տեսլական: Գրելու ազդակ է եղել նաև 14-ամյա փիկտոր Համբարձումյանի այցը բանաստեղծին: Դա 1922թ. ամռանն էր: Զրույցի ժամանակ ապագա խոշորագույն գիտնականը Թումանյանին տեղեկություններ է հաղորդել Սիրիուսի մասին: Ս. Թումանյանը ևս հիշում է, որ գրվել է 1922թ. ամռանը. «Աստղերով էր հետաքրքրվում և այդ օրերին էլ գրեց «Սիրիուսի հրաժեշտը»:

Տիեզերքի հետ համարժեք հարաբերություններ կերտելով՝ բանաստեղծն առանձնացավ իր ինքնաբավ ամբողջականությամբ և տիեզերական ամբողջությանը պատկանելու վստահությամբ: Տիեզերքը, անհունն իր մեջ կրող պոետը, որն իր գրականությամբ անուպայման էր հասարակության հոգևոր հիմքերը, կատարելությունը հասանելի բաղձանք է դարձնում:

«Անուշ» պոեմում երկինքը, աստղերն ու դյուբիջ գիշերը ամբողջացնում են Համբարձումյանի գիշերվա և սիրահարների հանդիպման համայնապատկերը: Համբարձումյանի գիշերվա նախերգանքն ու վերջերգը, գոյութեմապաշտական իմաստ և խորհուրդ կրելով, նախանշում են հոգևոր սկիզբը, ընթացքն ու ավարտը: Հեղինակը ուժ, զորություն և մոգականություն է հաղորդում աստղերին՝ ակնկալելով. «Ձուրն ու ծաղիկ աստղունք դրել, // Խնդիրք արել աստղերին, // Փափագ սրտով խընդիրք արել // Բարի ժպտան իր սերին»: «Աստվածային անհաս խորհուրդը» բովանդակում է «աշխարհից հեռու լազուր կամարը», իսկ «հրաշալի երջանիկ վայրկյանը» կապվում է «ոսկի երկնքի դռների» բացման հետ.

Համբարձումյանի գիշեր, էն դյուբիջ գիշեր,
Կա հրոշալի, երջանիկ վայրկյան.

Բացվում են ոսկի երկնքի դռները,
Ներքև պապանձում, լըռում ամեն բան,
Ու աստվածային անհաս խորհրդորով

Լըցվում բովանդակ ընդա սուրբ գըթով:
Էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝
Երկնքի անհու՛ն, հեռու խորքերից,

Ամնուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,

Գալի՛ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհից հեռու՛, լազուր կամարում:

Տիեզերական գրականության արտացոլումներ են նաև քառյակները: «Հոգիս՝ տանը հաստատվել» սկզբնատողով քառյակի մեջ տիեզերքը դառնում է Թումանյանի հոգու ապաստարանը՝ իդեալական մի աշխարհ, ուր տանում է նաև ընթերցողին՝ հակադրելու ոչ միայն աշխարհի չարությանն ու ողբերգություններին, այլև մահվանը: Այսինքն՝ մարդն այստեղ առընթեր գոյություն և կրավորական մասնիկ չէ, որովհետև «Տիեզերքի տերն եմ ես» տողը բարձրում գտնվելու և բարձունքից, այսինքն՝ բյուրեղացված, հոգեփոխված վիճակից իրեն ու երևույթները գնահատելու պատկեր է: Ներքոբերյալ քառյակում ևս «վեհանում է ամենալուր հոգին»՝ մերձենալով տիեզերքի «խոր մեղեդուն ու մրմունջին».

Ես շընջում եմ միշտ կենդանի Աստծու շունջը ամենուր.



Ես լըռում եմ Նըրա անլուռ կանչն ու հունչը ամենուր.

Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին

Տիեզերքի խոր մեղեդին ու մըրմունջը ամենուր:

Տիեզերքի այս անհատականացված ընկալմամբ Թումանյանն ընթերցողին համաձայնակից է դարձնում բարձրագույն ապրումներին. «Աստղային երազների աշխարհքներում լուսակաթ, // Մեծ խոհերի խոսքների հեռուներում անարատ, // Անհիշելի վերհուշերի մըշուշներում նըրբաղոտ՝// Երբեմն, ասես, ըզգում եմ ես, թե կրհասնեն Նըրա մոտ...»:

Մարդկային գոյության իրական անփոփոխ ակունքն ու առանցքը՝ տիեզերքը, դառնում է կենսափմաստային մուլտիպլան առարկա. «Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ»: Երկնքի հետ հոգեբանական մուլտիպլան տիպիկ օրինակ է նաև հետևյալ քառյակը. «Իմ հոգին էլ այն երկնքի ման, // Որ ծավալվում է ձեր գլխի վերև, // Ձեզ անհայտ, գաղտնի — տեսնում է շատ բան // Ե՛վ մոտ, և՛ հեռու, և՛ փայլուն, և՛ սև...»:

Թումանյանն ինքը փիլիսոփայական անվանեց իր ստեղծագործական կյանքի վերջին շրջանը: 1923 թ. հունվարի 21-ի գրույցի ժամանակ ասել է. «Իմ վերջին շրջանը՝ փիլիսոփայական շրջանը - «տիեզերական խոհերի» շրջանն է:

Բանաստեղծի՝ տիեզերքի հետ կապն ավելի սերտացավ մահվան մահձուն: Դստեր՝ Նվարդ Թումանյանի հուշերում ընթերցում ենք. «Առավոտը խնդրեց մահձակալը էնպես դնեք, որ երկինքը երևա».

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՞նչ կա որ.

Ես եղել եմ, կա՛մ, կլինեմ հար ու հավետ, ի՞նչ կա որ.

Հազար տպես ձեր փոխեն, ձեր խաղ է անցավոր,

Ես միշտ հոգի, Տիեզերքի մեծ Հոգու հետ, ի՞նչ կա որ:

Թումանյանի բանաստեղծական բանականությունը, ահավասիկ, շարժման մեջ դրեց տիեզերքը, որպեսզի արարչագործությունը շարունակվի երկրի վրա ու հոսի դեպի մարդկանց ներսը: Տիեզերքի հետ մերձեցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ կյանքի մշակութային նախագիծ, որտեղ ոչ միայն շտկվում են անցյալի ու ներկայի սխալները, այլև ուղեմշակում տիեզերքի ու բարձրալի հետ ներդաշնակվելու ճանապարհները: Թումանյանի քնարական հերոսը դառնում է տիեզերքին ծուլված բարձրակարգ մարդը, որը վերադարձել է իր արարչաստեղծ էությանն ու նախասկզբին: Հենց այսպես է Թումանյանը տիեզերքը դարձնում հոգևոր մշտամնա արժեք:

ԱՐՅԱԽՅԱՆ ԳՈՂԳՈԹԱ

ԿՅԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՇԸ՝ ԴժՈՒՔԻ ԳՈՒՅՆԵՐՈՎ Պատում Դ

Սկզբը՝ «Լուսարար»-ի 1-3-րդ համարներում

Ինչքան մոտենում էինք դժոխքի գծին, այնքան ավելի անհամբեր էինք դառնում: Ծանապարհին հանդիպում էին տեսարանների, որոնք ուղղակի մարդու ուղեղ էին ցնցում: Հայրենիք էինք թողել մեր ետևում, բայց, չգիտես ինչու, շտապում էինք հեռանալ հայրենի հողից ու հատել դժոխքի գիծը: Գծվելու բան է, բայց արի ու տես, որ չէինք գտնում...

Ծանապարհի այն ժախ եզրերին մեքենաներ էին թողնված բախտի քմահաճույքին: հավանաբար փչացել էին, ու տերերը թողել-զնայել էին: Շատերը տնային իրերով էին բեռնված մնացել, ու «լավ տղերքը» անգամ գաղթի ճանապարհին չէին կորցրել իրեն: քանդակ-տարել էին պահեստամասերը՝ հավելյալ փող աշխատելու համար: Ուրիշների գրկանքի ու կորստի հաշվին փող էին վաստակելու առանց խղճի խայթի: ա՛յ քեզ տմարդի վերաբերմունք: Սիրտս ճնշվում էր ցավից ու անճարակությունից: Ստածում էի՝ այսպիսի թափթփուկների ու տակալների պակաս, ցավոք, մեր ազգը երբեք չի ունեցել:

2, երրորդը՝ 3, չորրորդը ոչինչ չգիտի, առաջին անգամ է անցնում այդ ճանապարհով: Ինչու էլ էի առաջին անգամ այդտեղով:

Ինչքան մոտենում էինք մեզ համար հրեշավոր դարձած Հակարիին, այնքան շատ էինք հեռանում մեր չքնաղ երկրից, ու ավելանում էր մաշող կարոտն ու ծանր կորստի ցավը...

Ի վերջո, տեղեկացնում են, որ մոտենում ենք յոթվախամի հրեշին՝ Հակարիին: Մեքենաներին են մոտենում ռուս խաղաղապահները՝ ինք-

Հատում ենք անցակետը, ու մեքենան արագություն է հավաքում դեպի մայր հայրենիք: Գնում ենք առանց հետ նայելու, բայց ուրախությամբ մշույլ անգամ չէինք զգում: Քիչ անց արդեն հայրենիքում՝ բենզալցակայանի մոտ, մեզ կանգնեցնում են, հինգ լիտր բենզին ու քրի շշեր համձնում:

Վաղուց կեսգիշերն անցել, ու մութը դանդաղորեն նուրանում էր: Հասնում ենք Կոռնիձոր (երկու օր շարունակ ո՛րք էինք երազում հասնել այդտեղ): Այստեղ արդեն արժա-

վածն էինք հասկանում, ո՛չ կուշտը, ո՛չ ցերեկն էինք հասկանում, ո՛չ էլ գիշերը: Շնչում էինք, բայց չէինք ապրում, խոտում էինք՝ չհասկանալով, թե՛ ինչ: Մտքով, հոգով ու սրտով Արցախում էինք՝ մեր օջախներում: Հենց փակում էինք աչքերս, հայտնվում էինք մեր տներում, հարազատ մարդկանց շրջապատում, լուսանում է, իսկույն չքանում են այդ տեսարանները, որ արդեն դառը հուշեր են դարձել մեզ համար: Ցերեկներն էլ դրսում ենք Արցախ փնտրում՝ փողոցներում, բակերում, պուրակներում, սարերում՝ ամեն մի անկյունը համեմատելով մեզ ծանոթ ու հարազատ, բայց մեզինչ խլված արցախյան գողտրիկ վայրերի հետ: Ամենուր մեր Արցախն ենք փնտրում, որ շան բերանում սուրբ նշխար էր դարձել: Ո՞ր քարին, ո՞ր պատին խփենք գլուխներս, ունի՞ց պահանջներ մեր անդամալի կորուստը... Արդյոք ե՞րբ է մեղմվելու մեր այս անհատակ ցավը, միտք ու հոգի կեղեքող ազգային ցավը:

Հետո սկսվեց մեր տառապանքների նոր փուլը: անհրաժեշտ էր բնակարան վարձել, հո միշտ չէ՞ս կարող մնալ ծանոթ-բարեկամի տանը: Պետք էր գրանցվել տվյալ բնակավայրի քաղաքապետարանում կամ թաղապետարանում: Տների գներն էլ տիեզերական չափերի էին հասնում: Ո՛չ խիղճ կար, ո՛չ հոգի, ո՛չ էլ բանակազորություն: Մայր հայրենիքում մենք օտարներ էինք, չէինք համարվում ՀՀ քաղաքացիներ, չէինք արտոնություններից չէինք կարող օգտվել, քանի որ չունեինք ՀՀ քաղաքացիություն (անհրաժեշտ էր ուրանալ արցախյան կոչումը և ընդունել այստեղի քաղաքացիությունը: հնդիկների չափ է չկայինք, հե՛յ, գիդի աշխարհ...):

Ամենուր հերթեր էին ու հերթեր: Կորստյան ցավը ուրախած՝ գոյության կռիվ էինք տալիս: Հետո էլ պիտի գնայինք «հեղինակավոր ու արժանապատիվ» փախստականի քարտը ստանալու: դրանով միայն կարող էինք օտար ափերում «ոտքերը քարշ տալ»: Ամվերջ հերթեր, ինքնասիրություն վիրավորող անտարբեր վերաբերմունք, անհամբուրծողականություն՝ տիրող հարաբերություններում, նվաստացուցիչ ու ստորացուցիչ խոսքեր՝ հասցեագրված «թուրք դարաբաղցիներին»: Այս ամենը խեղդանալի էր ամուսն մեզ: Թվում էր՝ մենք ենք ամեն ինչի մեղավորը: Բայց սրա կողքին կար, գոյություն ուներ նաև ճիշտ հակառակ վերաբերմունքը: սրտացավ ու ջերմ մարդկանց ուշադրությունը շոյում էր մեր վիրավորված ինքնասիրությունը: Ինչ լավ է, որ գոնե կան կյանքը իմաստալից դարձնող այդպիսի մարդիկ:

Այնուհետև շաբաթներով ու ամիսներով ձգձգվող թոշակներ՝ «վարսավիրի կողմից խուզված մագերի պես», աջակցություններ, անտեղի ու անիմաստ սպասումներ՝ լավի ակնկալիքով, քաղաքական

դաշտում գոյություն ունեցող ինտրիգներ, բողոքի ցույցեր՝ առանց արդյունքի, ու էլի, էլի շատ իրողություններ, որոնց մասին խոսելն անգամ անհեթեթություն է: Ծանր բեռ էինք դարձել մայր հայրենիքի համար, դրա համար էլ շատերը բռնեցին օտարության ճանապարհը: Սկսվեց արտագաղթը մայր հայրենիքից, քանի որ ապրելու պայմաններ չկային: աշխատանք չկար, աշխատելու դեպքում էլ քիչ վարձատրությունը հնարավորություն չէր տալիս հոգալու բնակարանային ծախսերը: Պետական կառույցներում աշխատելու համար «դարաբաղցի» պիտակը խիստ խանգարող հանգամանք է, ու մարդիկ անընդհատ հոգնեցնող փնտրտուքի մեջ են: Արցախ վերադառնալու հույսն էլ օրեցօր մարում է ճրագի պես: Կարող, Սպասումը, Վերադարձը, Հույսն ու Հավատը որդի պես կրծում են մեր հոգիները: Հայրենակիցներիցս շատերը տարագիր են դառնում, մի մասը կորստյան ցավին չի դիմանում ու հրաժեշտ է տալիս կյանքին, մյուս մասն էլ ճամպրուկները կապած է: ահա այսպես մաղվում է արցախահայությունը: Ուրախանալու ո՛չ առիթ կա, ո՛չ էլ սիրտ: Ապրում ենք այսպես՝ ամեն մեռնողի երանի տալով: Ապագան շատ մշուշոտ է, մայր հայրենիքում էլ դեռ թմբկի մեջ են հայրենասեր ուժերը, իսկ երկիրը օրեցօր ծվատվում է: Ու ոչ ոք չգիտի, թե վաղը ինչ անակնկալ են բերելու մեր գլխին այս հայրենաբաճ ու հայերենաբան դիրտ ուժերը:

Արցախյան համն ու հոտը աստիճանաբար պակասում է, սահմանամերձ բնակավայրերում ծվարած արցախցիներին կրկին սպառնում է այս էլ որբորդանգամյա տեղահանությունը:

Մեզ ստիպեցին, որ արևմտահայերի պես մենք էլ կորցնենք «մըր էր-գիրը» ու խոր թախծով կրկնենք մեծ բանաստեղծուհու՝ Սիլվա Կապուտիկյանի դառնագին խոսքերը:

Մըր հեր էնտեղ, մըր մեր էնտեղ կծաղկին, Անուշ գիլան, մըմուռ ձենով կկանչին:

Իմա՞լ կեղնի, իմա՞լ չէրթանք մըր էրգիր, Քելե՛ լառ, քելե էրթանք մըր էրգիր:

Հիմա գարուն է իմ չքնաղ երկրում, ծաղկել է իմ հրաշք այգին, կանաչել են դաշտերն ու սարերը, ճովողում են թռչունները, քջջում են ամպակները:

Ես ուզում եմ իմ պատուհանից լսել թռչունների դալալը, շնչել անապակ օդը, վայելել արշալույսի մարգարտահատիկ ցողը: Ես մեր աղբյուրի սառը ջուրն եմ ուզում, ես իմ անգին Արցախն եմ ուզում:

Ուզում եմ, շա՛տ եմ ուզում, շա՛տ-շա՛տ եմ ուզում:



նաձիգներով զինված: Նրանցից մեկը՝ հավանաբար լավ խնամ, շարժվում է դեպի մեր մեքենան, ոտքով լկտիաբար հարվածում ու գոռում:

- Երկու շարքով կանգնել ու սպասել, հերթով...

Հիասթափությունս այլևս սահմաններ չէր ճանաչում: Էս ու՞մ ենք ապավինում:

Սպասում ենք՝ մեր հերթը գա, և հարբած խաղաղապահը հրաման արձակի: «Жаждте, ежайте!»:

Լսվում է, վերջապես, հրամանը, ու մենք դանդաղ շարժվում ենք առաջ: Մեզ են մոտենում թուրք զինվորներ (ոստիկաններ՝ են, թե՛ հատուկ ջոկատայիններ՝ դժվար էր կռահել, որովհետև այդ պահին մարդ նույնիսկ մոռանում էր շնչել): Նրանց սարսափազդու դեմքերին մայելիս մարդու զարգանդն էր գալիս:

Մոտենում ենք անցակետին: Երկու-երեք զինված մարդիկ մոտենում են մեր մեքենային՝ պահանջելով իջեցնել ապակիները: Գիշերային խավարի մեջ լուսանի աչքերի պես փայլում են նրանց աչքերը: Կոտրատված ռուսերենով հարցնում են՝ քանի՞ կին, երեխա ու տղամարդ կա: Լսում են մեր պատասխանը՝ չորս հոգի՝ երկու կին ու երկու տղամարդ: Հետո թե՛ բացեք բեռնախցիկը: Որդիս բացում է այն, և հենց որ նրանց աչքն ընկնում է վանդակին, որում «բանտարկված էին» տասը աղավինները, իսկույն պահանջում են ճանապարհիվ՝ իրենց լեզվով բարբառելով: «Գափըն, գափըն (փակե՛ք, փակե՛ք), գյեղըն (զնայե՛ք):

Խոր շունչ քաշելով՝ մտածում եմ: «Աղավիններն օգնեցին մեզ, ավելորդ քաշքշուկ տեղի չունեցավ, փառք Աստծո՛ւ»:

մանում ենք մեր հայրենակիցների ջերմ ու հոգատար վերաբերմունքին: Նրանք գիշեր-ցերեկ սպասում են, որ տաք ու սառը ուտեստներ, մրգեր ու մայր հայրենիքի անարատ ջրեր մատուցեն մեզ տասնամյա բլրկադայից փրկվելուց հետո: Թե ինչպիսի սրտացավ հոգատարություն էր երկարատև զրկանքներից ու տառապանքներից հետո, դժվար էր նկարագրել: Կյանքումս առաջին անգամ շատ դառը, շատ խոր անոթ զգացի, ու արցունքները խեղդեցին կոկորդս: ախր մենք սովոր էինք միշտ ուրիշներին բաժին հանել մեր ունեցածից: հիմա դարձել ենք մուրացկան: Այս ի՞նչ օրի հասցրին մեզ:

Հպարտությունս կծկվել-կուչ էր եկել ու տեղը չէր գտնում: Մի բանով էինք միայն հանգիստ, որ հայրենիքում ենք, ու այլևս ոչինչ չէր սպառնում մեզ:

Լուսաբացին Գորիս հասանք ու հյուրընկալվեցինք հարսիս մոր հայրական օջախում: Հույզերս ի վերջո հաղթեցին մտքիս, ու ես ազատություն տվեցի նախ արցունքներիս... ուրեմն կորա՞վ ամեն ինչ:

Ոչ ոք ու ոչինչ այլևս չէր կարող սփոփել մեր վիհատ սրտերը: Մխիթարողը միայն այն էր, որ փրկված ենք, ու ոչինչ չի սպառնում մեր ֆիզիկական գոյությանը: Մեկ օր մնացինք չքնաղ Գորիսում, հաջորդ օրը բռնեցինք Երևանի ճանապարհը, քանի որ հարազատներս այնտեղ էին: Երեկոյան հասանք Երևան: Սկսվեց մեր՝ փախստականի՝ տառապանքներով լի անարժան կյանքը: Երկար ժամանակ չէինք կարողանում մեզ գտնել, սթրեսի մեջ էինք: Հոգեվիճակ, որ ո՛չ անուն ունի, ո՛չ էլ բովանդակություն, որ կարողանաս նկարագրել: Ո՛չ սո-

ՀՈԳԵՎՈՐ ՈՒԺՈՎ

ՀԱՎԱՏՈՎ ԵՄՅԵՆՔ ԱՐՅԱՄԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ

Արցախի սրտում այսօր կղզիացած մեր Հուշին վերստին օտարացել է, ինչպես եղավ 18-րդ դարակեսին: Վարանդայի երբեմնի հզոր Մելիք-Շահնազարյաններից Մելիք-Յուսեփը, որը հարկ չէր տալիս նույնիսկ Նադիր շահին, թողեց վատ ժառանգորդ՝ Մելիք Շահնազար երկրորդին, որի մայրը թուրք էր: 1744թ., հոր մահից հետո, Վարանդայի տիրակալ է նշանակվել Մելիք-Յուսեփի ավագ որդի Մելիք-Յուսեփը, որին պարսիկները Յուսեփ էին անվանում: Նա խաչեցի Յուսեփ Զալալյանների տան փեսան էր: Նրա կրտսեր եղբայր Մելիք-Շահնազար 2-րդը, օգտվելով Իրանի զահակալական կռիվներից, սպանել է եղբորը, կոտորել նրա ընտանիքը եւ իրեն հռչակել Վարանդայի մելիք: Բաֆֆին գրում է. «Մելիք-Յուսեփը եւ Մելիք-Շահնազարը խորթ եղբայրներ էին, Յուսեփը ծնված էր Մելիք-Յուսեփի Աննա-խաթուն անունով կնոջից, որը Դիզակի իշխան Մելիք-Ավանի քույրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնված էր Ջոհրախանումից, որը Նախիջևանի խանի աղջիկն էր, ազգով թուրք: Մելիք-Յուսեփը նրան իբրեւ գերի բերեց Նախիջևանից, հետո ամուսնացավ նրա հետ»: Եղբորն սպանելու համար Արցախի մնացած մելիքները փորձում են պատժել Մելիք-Շահնազար 2-րդին: Վարանդայի մելիքը դիմում է Փանահ խանի օգնությանը, նրան հպատակվում եւ հավատարմության երդում է տալիս

եւ նրա աջակցությամբ ազատվում մելիքների պատժից: Այս իր աղջկան՝ Գուրգուլ խանումին կնության է տալիս Փանահի որդի Իբրահիմ խանին, նրանց նվիրում Արցախի անառիկ բերդաբաղաբ Հուշին: Այսպես անծոթ իջավ Մելիք-Շահնազարյանների տոհմի վրա, անիծվեց նաեւ հայոց բերդավանդը:

1992թ., մինչ Հուշիի ազատագրումը, Բերդաձորի ջոկատի տղաների հետ Ավետարանոցում էինք, սպասում էինք Հուշիի ազատագրման մարտական գործողություններին: Ազատ ժամերին շրջում էի Ավետարանոցում: Ավերակ վիճակում էր Մելիք-Շահնազարյանների տոհմի գերեզմանատունը: Բնակիչներն ասացին՝ դավաճաններ են, դրա համար է այդ վիճակում:

19-րդ դարում նույն Հուշի ամրոցում տեղակայվեցին ռուսական զորքերը, ինչը հնարավորություն տվեց նաեւ ամրոցի իսկական տիրոջը՝ հային, վերադառնալ իր տուն: Ու հզորացավ մեր քաղաքը, դարձավ հայոց մշակութային կենտրոն ամբողջ Անդրկովկասում:

20-րդ դարի առաջին կեսին Հուշին վերստին ենթարկվեց օտարի հարձակումներին: 1920թ. մարտի

22-26-ը Թուրքիայի Զանրապետության բանակի, նրա կողմից աջակցություն ստացող՝ Արցախում բնակվող թուրքերի (թաթարներ) եւ քրդական առանձին խմբավորումների կողմից տեղի ունեցավ Հուշի քաղաքի հայ բնակչության կոտորած, տեղահանություն: Արցախի վր էջերից մեկը: Հպարտ էինք ու ազատագրված տարիներին շենագնում էինք հայոց բերդաբաղաբը, գեղեցկացնում: Այն դարձել էր մեր հպարտությունը, ռազմական հաղթանակի խորհրդանիշ: «Հարսանիք լեռներում» ռազմական գործողությունը նաեւ օտարներին էր գարնացրել: 28 տարի անընդհատ մայիսի 8-9-ին տոնում էինք Եռատոնը՝ Մեծ հայրենականում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը, Հուշիի ազատագրումը եւ Արցախի պաշտպանության բանակի ստեղծումը: Թվում էր՝ վերջ. ունենք ազատագրված Արցախի Զանրապետություն՝ Սահմանադրությամբ ամրագրված սահմաններով, պաշտպանական հզոր բանակ: Ընդհանրապես՝ մայիսը հայոց հաղթանակների ամիս էինք հռչակել: Հուշիի ազատագրումից 10 օր անց թուրքը փախավ նաեւ Լաչին-Բերդորից, եւ բացվեց Արցախ-Մայր հայրենիք կյանքի ճանապարհը, կայացավ 1988-ի մեր պահանջը՝ Միացումը: Մի քանի անգամ թշնամու տիրապետության տակ անցած մեր բերդաքաղաքը հայացել էր, հիմնամորոզվեցին հայոց սրբատները՝ Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչն ու Կանաչ ժամը: Չմոռացանք նաեւ մահմեդական մզկիթի մասին:

Սակայն Հուշիի անեծքը դեռ



մնում է, այն թթափելու համար պետք է ազգովին ապաշխարենք: 2020թ. նոյեմբերի 9-ը Հայոց նոր պատմության սեւ էջերից է: Թշնամին տիրացավ Հուշիին, հերոս բնակավայր Քարին տակին: Ու մեծ անելիք թողեցինք ապագա սերունդներին՝ վերստին ազատագրել Հուշին, Քաջաթաղն ու Քարվաճառը, Հաղուրթը, որը երբեք չէր եղել թշնամու տիրապետության տակ, Վարանդայի հզոր մելիքանիստ Ավետարանոցը, որտեղ հաճախ է թշնամին կորուստներ տվել ու հետ չպարվել հայոց հողից:

2023-ի սեպտեմբերին վերստին եղավ պատերազմ Արցախում, ու արցախցին հեռացավ իր տնից: Այսօր ամբողջությամբ է գերված Արցախը, իսկ արցախցին սփռվել է տարբեր վայրերում: 32 տարի առաջ կայացավ Հուշիի ազատագրումը: Այսօր Ալիելը նոր աշխատանքներ է իրագործում բերդաքաղաքում: Հավատում են՝ մենք ենք օգտվելու դրանից: Քանդել են Կանաչ ժամը, բայց հայոց հոգեւոր ուժը չենք մեք չէ, հողում է: Խեղաթյուրում են Սուրբ Ամենափրկիչը: 1992-ին այն ազատագրեցինք ավերված վիճակում ու վերականգնեցինք: Նորից կվերականգնենք նախկին տեսքով: Կարելորդ հողն է ու մեր հավատը, սերը դեպի հայրենիք:

Զ. ԸՈՔՈՅԱԼ

ՆՎԻՐՎԱՆ ԲԵՐԶՈՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐԿԱՆ

32 տարի առաջ իրականացավ Արցախյան շարժման գաղափարը՝ ՄԻԱՏՈՒՄԸ: 1992թ. մայիսի 18-ին, Հուշիի ազատագրումից 10 օր անց, ազատագրվեց Լաչին քաղաքը, որը 20-րդ դարասկզբից, դեռևս Ավդալար անունով փոքր գյուղ, դարձել էր անջրպետ Արցախի ու Սյունիքի միջև: Այստեղ փակվեց նաև Անդրանիկի մուտքը դեպի Արցախ: Բացվեց Գորիս-Ստեփանակերտ ցամաքային ճանապարհը՝ Կյանքի ուղին: 1994-ի սկզբից Լաչինը վերանվանվեց Բերդոր և դարձավ Արցախի 7-րդ շրջանի՝ Քաջաթաղի վարչական կենտրոնը: Վերահայացած մեր հայրենիքում շուտով բացվեցին դպրոցներ, Բերդորում եւ Աղավնոյում կառուցվեցին եկեղեցիներ, հիմնամորոզվեց Ծիծեռնավանդը: Բերդորը դարձավ պատմական Մեծ Հայքի Սյունիք և Արցախ աշխարհների ազատագրված մի քանի գավառների՝ Աղահեճք-Քաջաթաղ, Հաբանդ, Քաջունիք, Կովսական, Բերդաձոր, Վայկունիք և այլն, իրար միավորող կենտրոնը: Բացի հանրակրթական դպրոցներից, Բերդորում սկսեց գործել նաև արվեստի և սպորտի դպրոցը, որը դարձավ շրջանի մարզամշակութային կենտրոններից մեկը: 2006-2014թթ. դպրոցը ղեկավարում էր Գոռ Մանուկյանը, որն ուներ և՛ մարզական, և՛ երաժշտական կրթություն: Եվ այդ տարիներին Բերդորի արվեստի ու սպորտի դպրոցը մեծ հաջողությունների հասավ: Արվեստի բնագավառում հատկապես զարգացավ կերպարվեստի բաժինը՝ ուսուցչուհի Տաթև Բաբայանի շնորհիվ: Վատ չէր պարարվեստի վիճակը: Մարզական առումով դպրոցն աչքի ընկավ հանդբոլի, հեծանվի, ծյուղոյի, շախմատի բաժիններով: Արցախի հանդբոլի աղջիկների հավաքական թիմում հիմնականում բերդորցի մարզուհիներն էին: Գ. Մանուկյանի կազմակերպմամբ՝ Ստեփանակերտում տեղի է ունեցել հեծանվավազքի միջազգային առաջնություն՝ նվիրված Արցախյան գոյամարտի անմահ հերոս Սամվել Չևրոյանի հիշատակին: 100կմ վազքում մրցում էին 6 երկրի հեծանվորդներ: Դպրոցը ծյուղոյի դասարաններ ուներ նաև շրջանի այլ

բնակավայրերում՝ Կովսական, Ուռեկան, Փակահան և այլն: Նույն մասնաճյուղերի սաներից կովսականցի Մոնթեն, Հովհաննեսը, վուրգավանցի Աշոտը, Բերդորից հեծանվորդ Վահագն Բաբայանը, որն ավարտեց Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանը, Հայոց բանակի փոխգնդապետ էր, ֆուտբոլիստներ Ժորա Սարգսյանը, Գոռ Սարգսյանը, Հունան Խանամիրյանը 2020թ. Արցախյան 44-օրյա պատերազմում հերոսացան ու նահատակվեցին:

կատարել իր թիմի հետ: Պատերազմից հետո ստեղծեց «Միիր» մշակութային կրթամարզական հասարակական կազմակերպությունը:

«Միիր»-ի ստեղծման օրվանից շատ պատահիներ ու աղջիկներ են ընդգրկվել մարզումներում, ստացել հայի արժեհամակարգի դաստիարակություն: Գ. Մանուկյանի նպատակն է նաև շարունակել Բերդորի արվեստի և սպորտի դպրոցի գործունեությունը Երևանում՝ հավատով, որ ինչ-որ ժամանակ անց՝ նաև Բերդորում:

Մայիսի 18-ին՝ Բերդորի ազատագրման 32-րդ տարեդարձի օրը, Երևանում՝ Այգեձորի առաջին նրբանցք 76 հասցեում, բացվեց «Միիր»-ի նոր կենտրոնը, որտեղ գործելու է նաև «Flexible bodyflex» արվեստի և սպորտի դպրոցը՝ որպես «Միիր»-ի դուստր կառույց, որի հիմնադիր տնօրենն է Նունե Ներսիսյանը: Նորաբաց կենտրոնի դասասեսյակներում ու դասիվներում Բերդորի արվեստի և սպորտի դպրոցի սաների նկարներն են, որոնք ստեղծվել են տարիներ առաջ հարազատ կրթությամբ: Նույն սաներից շատերը հետագայում էլ ուսումը շարունակեցին արվեստի ուսումնական հաստատություններում: Մի անկյուն նվիրված է Բերդորի արվեստի և սպորտի դպրոցի մարզական բաժնի այն սաներին, որոնք դարձան Անմահ հերոս 44-օրյա պատերազմի ընթացքում: Պատերին նաև «Միիր»-ի գործունեության ընթացքում կայացած մարզում-

ների, ճամբարների, արշավների և այլ միջոցառումների մասին պատմող լուսանկարներ են: «Միիր»-ը մասնաճյուղեր ունի նաև 33 մարզերում:

Նոր դպրոցի բացմանը ներկա էին զինվորականներ, արվեստի և սպորտի բնագավառների ներկայացուցիչներ, «Միիր»-ի աշխատակիցներ, աջակիցներ, բերդորցիներ, հյուրեր: Մուտքի կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց «Միիր»-ի աջակից, զինվորական Ռազմիկ Պետրոսյանին: Ներկաներին ողջունեցին «Միիր»-ի սաները հայոց այբուբենով: Ռազմախայրենասիրական երգերով հանդես եկան երգիչ Արսեն Համբարյանը, «Հայ լաո» հայկական երաժշտական ռոք-դուետի Տիգրան և Վարդան Թաղևադյան երկվորյակ եղբայրները: Ընթացքում էկրանին ցուցադրվում էր «Միիր»-ի մասին պատմող տեսաֆիլմ: Ողջույնի խոսքով հանդես եկավ Գոռ Մանուկյանը՝ կարևորելով իր ղեկավարած հասարակական կազմակերպության դերը հայ պատանիների կրթման գործում՝ հայտնելով շնորհակալություն բոլոր աջակիցներին, իր ընկերներին: Նշեց, որ կենտրոնի բացման օրը պատահաբար չի ընտրվել. նվիրված է Բերդորի ազատագրման օրվան: Այնուհետև եղավ պարզևատրման արարողություն: ՀԿ-ի շուրջ 10 աջակից ու ներկայացուցիչ պարզևատրվեցին շնորհակալագրով ու մեղավներով: Շնորհակալագրի և գովեստի արժանացավ նաև Բերդորի արվեստի և սպորտի դպրոցի կերպարվեստի ուսուցչուհի Տաթև Բաբայանը:


Կենտրոնում գործելու են մարզական ու մշակութային մի շարք բաժիններ (բռնցքամարտ, քիթ բոքս ՄՍԱ Այկիդո, ըմբշամարտ, կարատե, լատինաամերիկյան և եվրոպական պարեր, հայկական և տարբեր ազգերի ժողովրդական պարեր, մոդելային և թատերական արվեստ, կերպարվեստ), որոնք դասավանդում են արհեստավարժ մասնագետներ:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱԼ



ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՇՏ

ԳՈՐԳԵՆ ԲԱՂԱՍԱՐՅԱՆՆ ԻՄ ՀՈՒՆԵՐՈՒՄ



Կան ընկերներ, որոնք այնպես են ծուլվում քո ապրած տարիների լուծումն ու ընթացքին, որ անհրաժեշտ ու թյան դեպքում դժվարանում են գրել նրանց մասին:

Իմ լավ ու սրտակից ընկերների շարքում Գորգեն Բաղդասարյանն առանձնահատուկ տեղ է գրավում: Իմ ու Գորգենի ընկերությունն առանձնահատուկ է այն առումով, որ այն ուսանողական տարիների ընկերություն է՝ սկիզբ առած ու ծիածանված ուսումնառության հասուն տարիների հետ:

Անճառանկալի հիշողություն է այն տարին, որն իմ ու կուրսընկերներիս համար բնութագրվում է որպես 1940/1950 ուսումնական տարի:

Աղբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմությունը հարուստ ու բազմերանգ է: Հենց այդ բազմերանգ կամարի տակ եղավ իմ ու Գորգենի Բաղդասարյանի ընկերությունը, որը նոր իմաստ ու ընթացք ունեցավ մեր կյանքում:

Առաջին կուրսի պարապմունքների առաջին օրը դիմավորեցինք ուրախության անմոռանալի զգացումով: Ստացվեց այնպես, որ Աստծո կամոք ես, Գորգեն Բաղդասարյանը, Միքայել Բալասանը, Խորեն Բաղդասարյանը ուսումնական տարվա հենց առաջին օրվանից եղբայրացանք արցախյան հավատարմությանը ու ազնվությանը:

Մեր կուրսում հենց առաջին օրվանից հայտնվեց ժամերին առավել աչքի ընկնող Գորգենն էր, առանձնապես՝ լեզվի ժամերին մախադասությունների վերլուծության ժամանակ: Այդ կապակցությամբ հաճելի ապրումներ ունեցանք, երբ իմացանք, որ Գորգենն ամուսնացած է, կինը հայոց լեզվի հանրաճանաչ ուսուցչուհի Սիրանուշն է:

Երբ ավարտեցինք բուհը, հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գորգեն Անտոնյանն իր մոտ հրավիրեց ինձ, Ալբերտ Գրիգորյանին, Գորգեն Բաղդասարյանին ու Մարուսյա Բաղդասարյանին: Առաջարկեց միաժամանակ և՛ դասավանդել բուհում, և՛ շարունակել ուսումնասիրությունը: Այդպես էլ ստացվեց. ես ու Ալբերտ Գրիգորյանը՝ հայ և արտասահմանյան գրականության գծով, Գորգենն ու Մարուսյանը՝ հայոց լեզվի: Ասպիրանտուրայի 3-րդ (վերջին) կուրսում ես պաշտպանեցի թեզ, արժանացա բանասիրական գիտությունների թեկնածուի կոչման,

իսկ հետագա տարիներին պաշտպանեցին իմ մյուս ընկերները:

Լեզվաբանական առարկաների գծով միանգամայն գոհացուցիչ էր Գորգենի դասավանդումը: Դա իր դրական հիմքն ու պատճառն ուներ: Մինչև բուհ ընդունվելը Գորգենը դասավանդել է Բաբելի Կիրովի շրջանի հայկական միջնակարգ դպրոցում, որտեղ էլ հենց ծանոթացել էր ուսուցչուհի Սիրանուշի հետ ու ամուսնացել:

1962թ. ՀՀ ԳԱ Աճառյանի անվան գրականության ինստիտուտում Գ. Բաղդասարյանը պաշտպանել է թեզ՝ «Ստ. Ջորջանի պատմական եռագրությունը» թեմայով, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա արժանացել դոցենտի ու պրոֆեսորի գիտական կոչման և իրեն դրսևորել որպես հմուտ լեզվաբան:

1969թ. Աղբեջանի կառավարող շրջանների ազգային խորակառուցման հետևանքով փակվեց Բաբելի մանկավարժական ինստիտուտում 1932-ից գործող հայկական բաժինը և տեղափոխվեց Ստեփանակերտ: Առանց երկմտելու մենք միասին եկանք հայրենի Արցախ ու շարունակեցինք գիտամանկավարժական մեր գործունեությունը: Հարազատ ծննդավայրում Գ. Բաղդասարյանը նոր եռանդով լծվեց ոչ միայն մանկավարժության, այլև լեզվաբանության գործին: Նա ժամանակակից հայերենի կարևոր հիմնադիրների շուրջ հանդես էր գալիս գիտաժողովներում, ամսագրերում, կենտրոնական թերթերի էջերում: 1994թ. լույս տեսան նրա «Բայասեռի խնդիրները ժամանակակից հայերենում», իսկ 2004-ին՝ «Արդի հայերենի բայասեռի և բայակազմության հարցեր» գրքերը:

Գ. Բաղդասարյանը 1982-1988թթ. եղել է ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկան, մասնակցել հայ բարբառագիտությանը և հայոց լեզվի պատմությանը նվիրված միջազգային գիտաժողովներին: Պարզևսարմել է պատվոգրերով, 2006թ. արժանացել ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման: Յուրաքանչյուր մասնագետ ունենում է իր նշանաձող հանդիսացող երկր: Որպես լեզվաբան՝ Գ. Բաղդասարյանի երկար տարիների վաստակի արդյունքը հանդիսացավ «Արցախի բարբառի բառարան-հանրագիտարանը»՝ երկու հատորով: Առաջին հատորը ընդգրկում է Ա-Կ բառաշարը, իսկ երկրորդը՝ Զ-Օ: Գ. Բաղդասարյանն այդ ուղղությամբ կատարել է հայագիտությանը հետաքրքրող մեծ աշխատանք: Դարբառի բարբառը, որ հայ հնագույն բարբառներից է, հազարամյակներ շարունակ ծառայել է արցախցուն: Հայտնի են շուշեցի Ավ. Բահաթրյանի, մեծ գիտնական Ռ. Աճառյանի ուսումնասիրությունները Դարբառի բարբառի վերաբերյալ: Գ. Բաղդասարյանն իր «Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան» երկհատորյա գրքերով մի հետաքրքիր, նոր էջ ավելացրեց հայ բարբառագիտությանը: Նրա այս գործը կարելի է համարել լեզվաբան Կ. Դավթյանի «Լեռնային Դարբառի բարբառային քարտեզը» հանրահայտ աշխատության ինքնատիպ շարունակություն:

Կատակաչառ լեզվաբանը պատրաստել է հայոց լեզվի հազարավոր մասնագետներ: Վստահ ու համոզված էմ, որ նրա սաներից մեկը շարունակելու է իր անմոռանալի դասախոսի գործը: Գ. Բաղդասարյանի ուսումնասիրություններն ու երկհատորյա «Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան»-ը միշտ լինելու են թե՛ սովորողների և թե՛ հայոց լեզվի մասնագետների սեղանի գիրքը, որոնք մերոպյան ոսկեդրամիկ լեզվով միշտ հուշելու են դրանց վաստակաշատ հեղինակի անունը՝ Գորգեն ԲԱՂԱՍԱՐՅԱՆ:

Երջանիկ է այն գիտնական մանկավարժը, որն իր դասավանդման տարիների ընթացքում իր սաներին է նվիրում ոչ միայն գիտելիքների անհրաժեշտ բույլը, այլև սիրտն ու հոգին:

Նման գիտնական մանկավարժներից էր Գորգեն Բաղդասարյանը, մեր լեզվաբանության արցախածին աստղերից մեկը:

Սուրբաբ խԱՆՅԱՆ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրության կողմից.

Վերջերս «Գագիկ Ծառուկյան» բարբառ-ծական հիմնադրամի կողմից լույս է ընծայվել Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Արզումանի կազմած և խմբագրած «Արցախի ժողովրդագիտությունը. Դարբառի բարբառը» 20-հատորանոց մատենաշարի 14-րդ հատորը, ինչի առթիվ կազմակերպվել է շնորհանդես: Այդ մասին «Լուսարար»-ն ընդգրկեց տեղեկատվություն է տպագրել իր մատուցող համարում: Գրքի տիտղոսաթերթում նշվում է, որ մատենաշարը ներառում է Արցախի ազգագրության ու բարբառի վերաբերող այն հիմնական նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են 19-րդ դարի կեսերից առայսօր կամ դեռևս ձեռագիր վիճակում պահվում են տարբեր արխիվներում: Նորահրատարակ 14-րդ հատորի ընդարձակ ցանկում նշված են նա-

խորդ բոլոր 13 հատորներում ներառված հեղինակների աշխատությունները, սակայն դրանցում Գորգեն Բաղդասարյանը չկա: Շնորհանդեսի ժամանակ մատենաշարի խմբագիր Արմեն Արզումանն իր ելույթում նշեց հետագա հատորներում ներառվող հեղինակների նյութերը, և մեզ հասկանալի դարձավ, որ Գ. Բաղդասարյանն այդ հատորներում չի ընդգրկվելու: Միաժամանակ նշեց՝ 14-րդ հատորում ընդամենը ժլատ տեղեկություններ կան Գ. Բաղդասարյանի «Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան»-երկհատորյակի մասին (տես՝ հ. 14, էջ 27):

Հատկանշական է, որ մահվանից առաջ Գ. Բաղդասարյանը մի թղթապանակ ձեռքին այցելել էր «Լուսարար» թերթի խմբագրություն և ասել, որ թղթապանակում իր անտիպ գիրքն է: Մտահոգություն հայտնելով, որ իր մահից հետո ոչ մեկը չի հետաքրքրվելու դրանով, նա հավաստիացրեց է, որ այդ հարցում լիովին վստահում է «Լուսարար»-ին: 2012 թվականին թերթը ձեռնարկեց Գ. Բաղդասարյանի ներկայացրած՝ մինչ այդ անտիպ գիտական նյութերի տպագրությունը, որն օբյեկտիվ պատճառներով մի քանի ամիս հետո դադարեցվեց: Այնուհետև, այդ նյութերի տպագրությունը վերսկսեցինք 2022թ.: Հասցրինք տպագրել «Արցախցին՝ բառաստեղծ» բառարանը, որտեղ անփոփոխ էմ արցախցու ստեղծած բառերը, ապա՝ դարձվածքները: Թղթապանակում առկա էին նաև պարսկերենից, արաբերենից, թուրքերենից, ռուսերենից կատարված փոխառությունները, սակայն դրանց ծավալում լինելու պատճառով չկարողացանք թերթում տպագրել ու որոշեցինք հովանավորի միջոցով գրքի տեսքով տպագրել, որն ըստ էության կլինի Գ. Բաղդասարյանի «Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան»-ի 3-րդ հատորը: Սակայն չհասցրինք մտադրությունն իրականություն դարձնել...

Այսօր Գ. Բաղդասարյանից մեր ձեռքի տակ ունենք միայն այն, ինչ տպագրված էր «Լուսարար»-ում: Հետաքրքրվողները դրանք կարող են գտնել Lusarar.info կայքի «Արխիվ» բաժնում:

Անկեղծ ասած, մենք տեղյակ չենք եղել «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարի մասին, որը սկսել է հրատարակվել 2018 թվականից (Արցախում այն չի հանրայնացվել, տեղյակ էին միայն մեր շրջանակի մարդիկ. առաջին անգամ շնորհանդես երևանում է կազմակերպվել, ինչպես նշեցինք, 14-րդ հատորի կապակցությամբ), այլապես ժամանակին կարծազանքեինք: Դժվար է ասել, թե ինչու գործընկերներին դիմելու փոխարեն, որոնք մի մասը նրա սաներն են, նա «Լուսարար»-ին է վստահել իր ձեռագրերը: Կարծում ենք, ճիշտ կլինի Գ. Բաղդասարյանի աշխատությունները ևս «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարում ընդգրկելը: Դա կլինի հարգանքի տուրք անվանի լեզվաբանի հիշատակին:

Սվեդլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՅՔԻ ՉՆՈՐՀԱՆՂԵՍ

Մայիսի 10-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում (ՀԱԻ) տեղի ունեցավ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից իրականացվող «ՀՀ Սյունիքի մարզի բանախյուսական ժառանգության համայնքաին գույքագրումը, փաստաթղթավորումը և պահպանումը» ծրագրի շրջանակներում պատրաստված «Սյունիքի ոչ նյութական մշակութային ժառանգություն» կայքի շնորհանդեսը: Ներկա էին ծրագրով հետաքրքրվածները, հյուրեր: Ծրագիրը ղեկավարում է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանախյուսական տեքստաբանության բաժնի վարիչ, բ.գ.դ. Թամարա Հայրապետյանը: Բացման խոսքով հանդես եկավ ՀԱԻ տնօրեն Արսեն Բրդոխյանը՝ ողջունելով կատարված աշխատանքը: Ծրագրի

մասին, որին աջակցել են ՀՀ ԿԳՄՍՆ-ն ու ՀՀ Գրադատության ու ազգագրության ինստիտուտը, ներկայացրեց համակարգող՝ բ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանախյուսական տեքստաբանության բաժնի ավագ գիտաշխատող Գոհար Մելիքյանը: Տեղեկացրեց, որ ծրագրի նպատակն է գույքագրել, փաստաթղթավորել և պահպանել ՀՀ Սյունիքի մարզի ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Նշեց նաև, որ հիմնականում 4 հոգով են իրականացրել ծրագիրը՝ աշխատելով Սյունիքի 8 համայնքում՝ ընդգրկելով 2 հոգու մարզից:

2001թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն հարցում է անցկացրել պետությունների և ոչ կառավարական կազմակերպությունների շրջանում՝ որոշում մշա-

կելու նպատակով: Իսկ 2003թ. ընդունվել է ոչ նյութական մշակութային ժառանգության (ՈՆՄԺ) պաշտպանության կրնվեցիան, որի 2-րդ հոդվածը սահմանում է. «Ոչ նյութական մշակութային ժառանգություն»՝ նշանակում է սովորույթներ, ներկայացուցչությունները և արտահայտությունները, գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև հարակից գործիքները, առարկաները, արտեֆակտները և մշակութային տարածքները, որոնք ծանաչվում են համայնքների, խմբերի և որոշ դեպքերում անհատների կողմից՝ որպես իրենց մշակութային մաս»: Մեր երկրում «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» օրենքն ընդունվել է 2009թ.:

Կայքը ներկայացնելիս տեղե-

րաբերյալ: Կայքն ստեղծողների կողմից ՀՀ ՈՆՄԺ արժեքների ցանկում Սյունիքում գրանցվել են հետևյալ տարրերը՝ «Կորկոտ» ծիսական ուտեստի ավանդույթը, որն առանձնակի տարածում ունի Կապանի տարածաշրջանում, արքայանարնջի և թզի չրի պատրաստումը և Կառնապով կորկոտի պատրաստումն ու կիրառումը Շիկահող համայնքում:

Ծրագրի մասին արտահայտվեցին նաև ղեկավարը՝ Թամարա Հայրապետյանը, ինչպես նաև՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետ ժամեա Բլեքը: Ընթացքում եղան հարցադրումներ, առաջարկներ:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆԿԻՐՎԱԾ ԱՂՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Աղվանք տարածք-երկրամասի հարցը շատ է կարևորվում Հայոց պատմության մեջ: Աղբյուրների իշխանություններն իրենց «գիտնականների», ինչպես նաև այլազգի պատմաբանների, այլ մասնագետների միջոցով այսօր ու նաև խորհրդային տարիներին մշտապես փորձ են անում հաստատել, որ Հայոց Աղվանքը չի եղել Մեծ Հայքի տարածք, այլ իրենց երկիրն է: Այս հարցում աղբյուրների հատկապես խանգարում են հայկական պատմա-մշակութային կոթողները՝ վանքերն ու եկեղեցիները, առավելապես հանգստարանները՝ հազարավոր խաչակերտ ու հայատառ արձանագրություններով չիրմաքարերը՝ խաչքարեր ու տապանաքարեր, հուշակոթողներ: Այսօր առավել վտանգավոր է դարձել այն, որ անբողջովին հայաթափ է Արցախը, և գերության մեջ գտնվող մեր մշակութային կոթողները վերացվում են կամ ձևափոխվում են հայերեն արձանագրությունները: Իրենց կեղծ թեզն ապացուցելու համար Աղբյուրների իշխանությունները կազմակերպում են ուղիների ուսուցանողական հայկական վանքեր ու եկեղեցիներ: Վերջերս համացանցում տեղադրել էին մի հոլովակ՝ ինչպես են ուղի հոգևորականները Քաջաբաղի շրջանի Ծիծեռնավանքում աղոթում:



Խնդրի հետ կապված՝ մայիսի 14-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ «Աղվանքը և Հայ Աղվանից եկեղեցին» խորագիրը կրող աշխատառնող գիտաժողովն անցավ: Այս կարևոր գիտական քննարկումը կայացավ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի նախաձեռնությամբ՝ ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների օջախում: Ներկա էին պատմաբաններ, արևելագետներ, հոգևորականներ, աղվանագիտությանը հետաքրքրվողներ:

Նիստը Տերունական աղոթքով բացեց Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը՝ մտաբերելով բարի և արդյունավետ ընթացք: Բանախոսությանը հանդես եկան աղվանագետ, պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Հակոբյանը և պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ «Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը)» աշխատության հեղինակ, Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի նախկին խորհրդական Մելանյա Բալայանը: Նիստը վարում էր պատմաբան, ԱՀ ԿԳՄՍ մշակույթի գծով փոխնախարար Լեռնիկ Չովհաննիսյանը: Ներկա էր նաև Հայկական լեռնաշխարհի մշակութային ժառանգության օմբուդսմեն Չովիկ Ավանեսովը:

Աղվանագետ Ա. Հակոբյանն անդրադարձավ ընդհանրապես Աղվանքի խնդրին՝ կարևորելով Բուն Աղվանքի տեղն ու դերը և Հայոց Աղվանքի պատմությունը: Ըստ գիտնականի՝ Բուն Աղվանք երկիրը կողմանքում: Գիրքը գրելիս հեղինակը հիմք է ընդունել հայ ու օտարագրի բազում մատենագիրների թողած հիշատակությունները, այլ աղբյուրներ: Մյուս մեծագրության երկրորդ վերամշակված տարբերակը ռուսերեն է, հրատարակվել է 2022թ. Երևանում: Կոչվում է «Ալբանիա-Աղուանքը յունա-լատինական և հին հայկական աղբյուրներում»: Գրքում ներկայացվում է Ալբանիայի պատմությունը, պատմական աշխարհագրությունը, ժամանակագրությունը: Հեղինակը կատարել է ալեյի խորը իմաստաբանական վերլուծություն «Ալբանիա» և «ալբանացիներ» տերմինների վերաբերյալ անտիկ և միջնադարյան աղբյուրներում:

Իր ելույթում Մ. Բալայանն անդրադարձավ Աղվանից Հայ եկեղեցու դերին: Հայ առաքելական եկեղեցու կազմավորման պահից ի վեր նրա կարևոր ու անբաժան մասն է կազմել Աղվանից հոգևոր առաջնորդությունը: Քաղաքական և դավանաբանական տարբեր ազդեցություններով պայմանավորված՝ 552թ. Հայոց կաթողիկոսի նախաձեռնությամբ ժողով է գումարվել Պարտավում, և ստեղծվել է պատմության մեջ հայտնի Աղվանից կաթողիկոսությունը, և առաջին կաթողիկոս է ընտրվել Աբասը, որը Մեծառանցի Հակոբավանքի առաջնորդն էր: Բուն Աղվանքի և Հայոց Արևելից կողմանց Եպիսկոպոսությունների միավորման արդյունքում կազմավորված Աղվանից կաթողիկոսության առաջնորդների նստավայր է դարձել Մեծ Հայքի Ուտիք նահանգի Պարտավ քաղաքը: Այստեղ աթոռակալել են Արցախի և Ուտիքի, միայն մեկ դեպքում՝ Բուն

Երբ Մեծ Հայքում վերացավ Արշակունիների արքայատոհմը, և Հայաստանը դարձավ Պարսկաստանի կազմում մարզպանություն, Հայոց արևելից նահանգները՝ Ուտիքն ու Արցախը, Բուն Աղվանքի հետ կազմեցին առանձին մարզպանություն՝ Աղվանք անվանումով: Սկզբնական շրջանում Աղվանքի մայրաքաղաքը եղել է Ղերբեճը: Այս հնագույն քաղաքը հիմնադրվել է Սասանյան Իրանի կողմից՝ որպես պատմեչ ընդդեմ հյուսիսային ցեղերի հարձակումների: Հայկական պատմագրությունում քաղաքը հաճախ կոչվել է ճորա պահակ կամ Աղվանքի քաղաքը: Յուրաքանչյուր ժամանակներից այստեղ ձևավորված է եղել նաև հայկական համայնք, և արաբական տարբեր աղբյուրներում Ղերբեճը անվանվում է «Հայկական քաղաք»: 6-րդ դարից սկսած՝ Աղվանքի մայրաքաղաքը եղել է Ուտիքի Պարտավ քաղաքը: Հետագայում Հայոց Աղվանքն ուներ իր թագավորությունը, իշխանությունը: Իսկ Աղվանից հայոց եկեղեցին մտնում էր Հայ առաքելական եկեղեցու մեջ՝ որպես առանձին թեմ:

Ա. Հակոբյանը ներկայացրեց նաև վերջերս իր հեղինակությամբ հրատարակված երկու գիրք՝ նվիրված Աղվանքին ու այստեղ գործած հայ արքաներին ու իշխաններին: Առաջին գիրքը հրատարակվել է 2020թ. Երևանում, կոչվում է «Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում և Հայոց արևելից

կողմանքում»: Գիրքը գրելիս հեղինակը հիմք է ընդունել հայ ու օտարագրի բազում մատենագիրների թողած հիշատակությունները, այլ աղբյուրներ: Մյուս մեծագրության երկրորդ վերամշակված տարբերակը ռուսերեն է, հրատարակվել է 2022թ. Երևանում: Կոչվում է «Ալբանիա-Աղուանքը յունա-լատինական և հին հայկական աղբյուրներում»: Գրքում ներկայացվում է Ալբանիայի պատմությունը, պատմական աշխարհագրությունը, ժամանակագրությունը: Հեղինակը կատարել է ալեյի խորը իմաստաբանական վերլուծություն «Ալբանիա» և «ալբանացիներ» տերմինների վերաբերյալ անտիկ և միջնադարյան աղբյուրներում:

Աղվանքի հոգևոր կենտրոններից ընտրված 19 կաթողիկոսներ: 13-րդ դարում կաթողիկոսությունը տեղակայվել էր Մեծառանցի կամ Ս. Հակոբավանքում, իսկ 14-րդ դարում տեղափոխվել ու հաստատվել է Արցախի սաչեն գավառի հոգևոր կենտրոն Գանձասարի վանքում: Բանախոսները հանդես եկան նաև այլ հարցերի շուրջ: Ելույթներից հետո եղավ քննարկում: Հարցադրումներով ու առաջարկներով հանդես եկան ներկա գիտնականները, հոգևորականները: Բոլորի մտահոգությունը մեկն է՝ տեղ մնալ մեր մշակույթին: Գիտաժողովն ավարտվեց Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի օրհնանքով ու աղոթքով:

Ջոհրաբ ԸՆԶՈՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Լույս է տեսել 2022թ. հոկտեմբերի 8-11-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի, Արցախի գիտական կենտրոնի կողմից Արցախում կազմակերպված «Արցախի հոգևոր և մշակութային ժառանգության պաշտպանության ու պահպանության վտանգները» խորագրով գիտաժողովի նյութերի ժողովածուն: Այն բացվում է ԱՀ նախկին նախագահի խորհրդական Լուսինե Ղարախանյանի ելույթով, որում մասնավորապես ասվում է. «Հիրավի, սպրոն ենք պատմական ծանրագույն իրողությունների մեջ և գրեթե անկարող ենք ներգործել թշնամու կողմից իրականացվող հակահայ քաղաքականության վրա: Չկա Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը: Տարածքների կորստի հետ թշնամու վերահսկողության տակ է մնացել պատմամշակութային հսկայական ժառանգություն, որը մեր անժխտելի պատմական ներկայության քարտեզն է: Եկեղեցիների, ամրոցների, խաչքարերի, գերեզմանաքարերի, դամբարանադաշտերի զգալի մասը պեղված և ուսումնասիրված չէ: Թիրախավորվում և ոչնչացվում են դարերի պատմություն ունեցող եկեղեցիները, գերեզմանատներն ու հուշարձանները, բերդերն ու ամրոցները: Առկա է նաև բռնադատության վտանգը: Աղվանացու թեզերը, պատմության ցրվածությունը, կեղծարարությունն անվերահսկելի արագությամբ տարածվում են լրատվության բոլոր հնարավոր տղանցքներով: Մեզ շատ քիչ բան է հաջողվում անել: Գուցե թե սրան նպաստում են նաև աշխարհաքաղաքական և տարածաշրջանային, մեղմ ասած, ոչ հայաստանյայց իրողությունները: Արցախը, որպես Հայոց աշխարհի արևելյան պատմեչ, երբևէ այսպես ծանր վիճակում չէր հայտնվել: Մեր ինքնությունը հարձակման է ենթարկվում տարբեր տեղերից, խոցվում ու բռնադատվում: Մենք ակամա նաև հոգևոր հարձակումների գոհ ենք: Ցայսօր մեզ չի հաջողվում ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշտադիտարկման առաքելություն կազմակերպել Արցախում: Ցայսօր միջազգային իրավապաշտպան և ոչ մի կառույց գործում քայլեր չի ձեռնարկել ի պաշտպանություն Արցախի պատմամշակութային ժառանգության: Սա ողբերգություն է, որովհետև Արցախի մշակույթը միայն հայության ժառանգությունն է և պրոպագանդա՝ այս տարածքի առաջնային տիրապետման իրավունքի անսակարկելի և անկշռադատելի ուժը: Ի գործ է ի պայքար»:



Ժողովածուում ներառված է նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչության կենտրոնի և Արցախի հոգևոր-մշակութային հարցերով գրասենյակի ղեկավար Հայր Գարեգին Համբարձումյանի, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի ողջույնի խոսքը: Հայր Գարեգին Համբարձումյանը մասնավորապես նշել է Արցախի հայկական հոգևոր և մշակութային հուշարձանները Աղբյուրների կողմից անխնայ ավերման ենթարկվելու փաստի մասին միջազգային հանրությանը իրագրելու և այդպիսով հայկական ժառանգության ոչնչացումը կանխելու նպատակով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ձեռնարկված միջոցառումները:

Չէ Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանն իր ողջույնի խոսքը եզրափակել է հետևյալ խոսքերով. «Այսօր մենք պետք է նախ հաղթենք ինքներս մեզ, մեր ներսի չարին, հետո մնացած հաղթանակները արագորեն կհաջորդեն իրար: Ուստի այսօր մենք պետք է նաև ազգային մշակույթի միջոցով վերակերտենք մեր ինքնությունը՝ զարգացնելով նրա մեջ պաշտպանողական և ինչու չէ նաև՝ հայրենակրկական բնազդը՝ դաստիարակելով քրիստոնյա, հայրենամասնաչ և պետականակերտ սերունդը»:

Գիտաժողովում լսվել են նաև առցանց եղանակով՝ հրատապ գեկուցումներ, որոնք գեղեցկվել են ժողովածուում: Դրանք են՝ «Արցախի մշակութային ժառանգությանն ուղղված քաղաքականության առաջնահերթ խնդիրներն արդի փուլում» (Համլետ Պետրոսյան, Հայկունի Մուրադյան), «Արցախի նյութական մշակութային արժեքների պաշտպանությունը» (Թեասա Հոֆման), «Աղվանից կաթողիկոսական աթոռի տեղափոխության հանգամանքները» (Մելանյա Բալայան), «Իվանյան (հոջալու) բնակավայրը. պատմական անցյալ և ներկան (Վահրամ Բալայան), «Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության պատմական նշանակությունը» (Իրինա Բարսեղյան-Կրպեյան), «Գերմանիայի Դաշնային Հանրապետության ջանքերը Աղբյուրների-Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում» (Հարություն Գրիգորյան), «Արցախյան հիմնախնդիրը հարիդարային Աղբյուրների զավթողական քաղաքականության թիրախում: Անդրադարձ աղբյուրների պատմագիտության խեղաթուրումներին» (Արմինե Խաչատրյան), «Արցախի հին շրջանի մշակույթի հետազոտության արդի վիճակը և աղբյուրների քննարկումները» (Նժդեհ Երանյան), «Մշակութային ժառանգության պահպանության միջազգային սկզբունքները և հայ մշակութային ժառանգության բռնադատումը Աղբյուրների կողմից» (Արմինե Տիգրանյան), «Արցախի ձեռագրական ժառանգությունը» (Թամարա Միմայան), «Աղբյուրների կողմից հայկական մշակութային ժառանգության յուրացումը և ոչնչացումը որպես ռազմական հանցագործություն» (Չովիկ Ավանեսով, Յանա Դավթյան, Վահան Բարսիսյան), «Присвоение и уничтожение Азербайджаном Армянского культурного наследия как военное преступление» (Овик Аванесов, Яна Давидян), «Աղուանից կաթողիկոսությունը Ժ. դարի երկրորդ կեսին» (Ղևոնդ քահանայ Տեոմկին), «Խաչեն-Դորբատլիի դամբարանի արաբերեն արձանագրությունը (Բաֆի Քորթոշյան), «Գետամիջոց Սբ. Աստվածածին եկեղեցին» (Աշոտ Հակոբյան):

Գիրքն անվճար տպագրել է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը:

ՍԱՐՁԱԿԱՆ

ԳՂԱԴԱՐԵՑՆԵԼ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԿԵԼ՝ ԱՆԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ

Արցախից բռնատեղահանվելուց հետո մարզաշխարհի շատ ներկայացուցիչներ շարունակում են իրենց գործունեությունը Հայաստանում, մինչդեռ քչերին է հաջողվում կենսական նշանակության խնդիրները լուծմանը զուգահեռ (փայտատականի կարգավիճակով) հասնել որևէ լուրջ մարզական կամ մարզական հաջողության: «Լուսարար»-ի ընթերցողներին քաջածանոթ հերթական մեր գրուցակիցը կարողացել է հաղթահարել առաջացած նոր մարտահրավերները, եւ մարտարվեստի իրական հետնորդներին բնորոշ՝ չի դադարել հմտությունները կատարելագործել սիրելի արվեստում:

Արցախի վիճադատի ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ Սայաթ Բաղդասարյանը բռնատեղահանվելուց հետո հաճախել է մարզումների 77 վիճադատի ֆեդերացիայում եւ բարձր ընդունակությունների շնորհիվ արագ յուրացրել մատուցվող վիճադատի ծրագիրը՝ ստանալով 77 վիճադատի ֆեդերացիայի 4-րդ ու Եվրոպայի վիճադատի 12-րդ կարգերի դիպլոմներ:

Ավելի վաղ՝ դեռևս Իսրայելի (վիճադատի հիմնադիր) ժամանակաշրջանում վիճադատի կարգերը բաշխված էին ավանդական ձևով՝ 6 կարգ: Յուրաքանչյուր կարգ ներառում էր որոշ տեխնիկաներ, թեորիա եւ պրակտիկա, որը պետք է աշակերտը ցուցադրեր իր կարգին համապատասխան քննության հանձնման ժամանակ: Ներկայում էլ պահպանվել են վիճադատի քննության հանձնման ավանդական ձևերը, մինչդեռ կան վիճադատի դպրոցներ, որոնք ստեղծել են իրենց ավանդույթները: Քննությունն անց է կացվում անհատապես, քանի որ պետք է մանրազնին ստուգվեն յուրաքանչյուր աշակերտի կարողությունները:

Հաճախակի տրվող հարցերից է, թե որքան ժամանակ է պահանջվում աշակերտից հմտանալու եւ վարպետանալու համար, որին տրվող պատասխանը պարզ է. ճիշտ այնքան ժամանակ, որքան կհերիքեն ձեր համբերությունը, կարողությունը, ձգտումը եւ ուրիշ հատկություններ: Բայց իրական վարպետներն իրենց չեն համարում վարպետներ: Նրանք հիմնականում դժգոհ են իրենցից եւ իրենց պատրաստվածության մակարդակից եւ, իհարկե, իրենց աշակերտների պատրաստվածությունից: Դա միակ չափորոշիչն է զարգացման ու կատարելագործման համար:

Վիճադատի ավանդույթներին հավատարիմ մարզիչը՝ Սայաթ ԲԱՂԴԱՍԱՐԻԱՆԸ, նույնպես անընդհատ կատարելագործվելու ուղիով է գնում, չի հանձնվում դժվարությունների առջև եւ չի կորցնում Արցախ վերադառնալու հույսը:

- Սայաթ, մանրամասնե՞ք, թե ինչ նշանակություն ունեն կարգերը վիճադատի ուսուցման համակարգում:

- Կարգերը խորհրդանշում են մարզիկի տեխնիկական պատրաստվածության եւ ծրագրի իմացության մակարդակը: Վիճադատի ուսուցման մեջ կարգերն ունեն նույն նշանակությունը, ինչ դասարանը աշակերտի կամ կուրսը ուսանողի համար: Հայաստանի վիճադատի ֆեդերացիան առաջնորդվում է վեց կարգային համակարգով, որտեղ առաջին չորս կարգերը ստանալու համար քննություն հանձնելուց հետո աշակերտը կարող է դառնալ իրահանգիչ,

իսկ վերջին 5-րդ եւ 6-րդ կարգերը վարպետական են, խորհրդանշում են վարպետության աստիճանը: Արցախի վիճադատի ֆեդերացիան սերտորեն համագործակցել է շարունակում է համագործակցել 77 վիճադատի ֆեդերացիայի հետ, ինչն էլ հնարավորություն է տալիս, որ արցախցի վիճադատիստները կարողանան վերապատրաստվել եւ քննություն հանձնել 77 վիճադատի ֆեդերացիայում: Կառույցը նաև հնարավորություն է տալիս ստանալ վիճադատի Եվրոպական ֆեդերացիայի կողմից սերտիֆիկատ: Եվրոպական ֆեդերացիան առաջնորդվում է 24 կարգ ներառող վիճադատի համակարգով,

որտեղ առաջին 12-ը համապատասխանում են մեր 4 կարգերին, իսկ հաջորդ 12-ը՝ մեր 5-րդ եւ 6-րդ կարգերին:

- Հավանաբար Արցախում ամիսներ տևած շրջափակումը խանգարեց, որ ըստ ծրագրի պահանջվող ժամանակին պատրաստվե՞ք ու



ներկայանայի քննության, այնուամենայնիվ, ինչպե՞ս հաջողվեց կարճ ժամանակում պատրաստվել ու հանձնել քննությունը:

- Այո, շրջափակումը շատ խանգարեց իմ որակավորման քննությանը, բայց ծրագիրն օն-լայն ստանալուց հետո Արցախում ինքնուրույն մարզվում էի: Մնում էր գալիս երեւան եւ իմ վարպետի՝ Սուրեն Ավագյանի գլխավորությամբ կատարելագործվելի 77 վիճադատի ֆեդերացիայում, որպեսզի հանձնելի հերթական քննությունը: Տեղահանման դժվարությունը եւ պարապմունքների ներկայանալու խոչընդոտները ժամանակի ընթացքում հաղթահարելով՝ վեց ամսվա մեջ ինձ հաջողվեց հասնել նրան, որ կարողացա հանձնել քննությունը:

- Հաջողությամբ հանձնված 4-րդ կարգի քննությունը ի՞նչ ազդեցություն ունեցավ Ձեզ՝ որպես մարզիչ վրա:

- Քննության հանձնումը նշանակում է, որ ավելի բարձրացավ իմ մարզական պատ-

րաստվածության մակարդակը եւ գիտելիքներս այդ բնագավառում: Ես ստացա 77 վիճադատի ֆեդերացիայի 4-րդ կարգի վկայական, որը համապատասխանում է Եվրոպական ֆեդերացիայի 12-րդ կարգին: Իմ ստացած երկրորդ վկայականը վիճադատի Եվրոպական ֆեդերացիայի 12-րդ կարգի քննությունը հանձնելն է վկայում, ինչը համարում եմ մեծ հաջողություն իմ մարզական կարիերայում:

- Ներկայում ի՞նչ վիճակ է Արցախի վիճադատի ֆեդերացիայում, հաջողվե՞լ է համախմբել արցախցի վիճադատիստներին Ձեր շուրջը եւ շարունակել մարզումները Հայաստանում:

- Արցախի վիճադատի ֆեդերացիան 77-ում դեռ չի գործում մարզադահլիճի բացակայության պատճառով: Պետության կողմից այդ հարցում որևէ աջակցություն չկա, իսկ վարձակալական հիմունքներով վճարվող պարապմունքներ անցկացնելը հարմար չէ, քանի որ անսավճարները շատ բարձր են: Աջակցության ձեռք մեկնելու խնդրանքով դիմել ենք բարեարձրների, բայց դեռ դրական քայլ չկա, մինչդեռ արցախցի բոլոր աշակերտները սպասում են մարզումների վերսկսմանը: Ձգտում ենք անպայման շարունակել Արցախի վիճադատիստների մարզումները:

Մենք՝ որպես Արցախի վիճադատիստներ, երբեք չենք հանձնվել թե՛ պատերազմի, թե՛ բուկալայի ժամանակ, հաճախ անբարենպաստ պայմաններում անգամ չենք դադարեցրել մարզումները, եւ չենք էլ հանձնվել: Սպասե՛ք հաջողությունների ու նոր հաղթանակների, իսկ որպես գերմատակ՝ այնպես պետք է անենք, որ մեր ֆեդերացիան նորից գործի Արցախում:

ՄՊՈՐՏԸ՝ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Երբ մենք խոսում ենք սպորտի մասին, առաջին հերթին մտածում ենք դրանից ստացվող ֆիզիկական օգուտի մասին: Ֆիզիկական վարժություններն օգնում են դառնալ ավելի դիմացկուն, ամրացնել մկանները եւ ունենալ ուժեղ մարմին: Բայց դա այն բոլորը չէ, ինչ կարող է մեզ տալ ֆիզիկական ակտիվությունը: Սպորտով պարբերաբար պարապելն օգնում է պայքարել ընկճախտի (դեպրեսիայի), տագնապի եւ սթրեսի դեմ: Այն ամենը, ինչ լավ է ազդում մեր մարմնի վրա, մեծ ազդեցություն ունի նաեւ բանականության վրա: Կարելի է հասկանալ, թե որ ֆիզիկական վարժություններն են դրական ազդում յուրաքանչյուր մարզվողի ինչպե՞ս առօրյա կյանքի, այնպես էլ ընդհանուր ինքնագագացողության վրա:

Հետհակամարտային միջավայրում ապրող մարդկանց, առավել եւս երեխաների շրջանում անխուսափելի են սթրեսն ու տագնապը, հետվնասվածքային սթրեսային խանգարումները, որոնք չի կարելի անտեսել: Դրանց դեմ պայքարելու լավագույն միջոց են ֆիզիկական պարապմունքները, իսկ ավելի նպատակային են խմբային պարապմունքի տարբերակները:

Արցախից բռնի տեղահանվելուց հետո մեր մարզիչները, կարողանալով հաղթահարել մի շարք դժվարություններ, վերսկսել են տարբեր մարզածներին մարզումներ անցկացնել: Բարեբախտաբար կան մարզվելու հնարավորություններ ինչպես երեխաների ու պատանիների, այնպես էլ

հասուն տարիքի մարդկանց համար: «Լուսարար»-ը պարբերաբար ներկայացնում է արցախցի մարզիչների ու մարզիկների գործունեության մասին պատմող նյութեր, որոնցում արժանագրվում են նաեւ գործող մարզիչների տվյալները: Բոլոր ցանկացողները կարող են օգտվել տեղեկություններից, հետաքրքրվել ու միանալ իրենց պահանջներին համապատասխանող մարզածների պարապմունքներին, որոնք բոլոր առավելություններին բացի նաեւ լավ հնարավորություն են մշտապես շփվելու մեր հայրենակիցների հետ, պահպանելու Արցախի բարբառը, լինելու միաբանված: Իսկ մինչ այդ նպատակային են համարում եւս մեկ անգամ վերահանել ակտիվ կենսակերպի կարևորության, օգտակարության, իսկ մեր դեպքում՝ սպորտի ավելի շատ պահանջված լինելու մասին թեման:

Ակտիվ կենսակերպն ունի մի շարք առավելություններ մեր հոգեկան առողջության համար: Դրա միջոցով բարելավվում են ուղեղի առողջությունը եւ կոգնիտիվ (իմացական) գործառնությունները, ինչպես նաեւ նվազում է ընկճախտի ու տագնապի առաջացման ռիսկը: Պարբերաբար մարզումները նպաստում են քնի ու տրամադրության լավացմանը: Պետք է հաշվի առնել, որ եթե կան առողջության հետ կապված լուրջ խնդիրներ, ուրեմն պետք է բժշկի հետ խորհրդակցել նախքան մարզումներ սկսելը:

Ինչպե՞ս է սպորտն ազդում հոգեկան առողջության վրա: Ֆիզիկական վարժությունները շատ ավելին են

տալիս, քան միայն ֆիզիկական կառուցվածքի բարելավումը: Դրանք նպաստում են, որ մարդն ապրի երկար ու առողջ կյանք՝ բազմաթիվ առավելություններով, ինչպիսին են էներգիայի ավելացումը եւ դիմացկունությունը: Դա նաեւ հոյակապ միջոց է տրամադրությունը բարձրացնելու համար: Հետազոտությունները ցույց են տալիս, որ պարբերաբար կատարվող ֆիզիկական վարժությունները կարող են զգալիորեն նվազեցնել հոգեհանգստությունը, բարձրացնել էներգիայի մակարդակը, նպաստել լավ քննելուն, դրական ազդեցություն ունենալ տրամադրության եւ բանականության վրա՝ բարելավելով կենսորոգնացությունը եւ հոգեկան առողջությունը:

Ֆիզիկական վարժությունները բնական ու արդյունավետ միջոց են տագնապի, ընկճախտի եւ սթրեսի բուժման համար: Անկախ նրանից, թե քանի տարեկան եք եւ որքանով եք սպորտային, ֆիզկուլտուրան օգտակար է բոլորի համար: Պետք է դրան վերաբերվել ինչպես հաճելի սովորության, որը կօգնի հաղթահարել հոգեկան առողջության հետ կապված խնդիրները:

Մարմնի շարժումները օգնում են հանել լարվածությունը եւ բարձրացնել ֆիզիկական ու մտավոր էներգիայի մակարդակը՝ ստիպելով, որ օրգանիզմը արտադրի էնդորֆիններ, որոնք ընդունված են անվանել «երջանկության հորմոններ»: Կարող եք ոչ միայն արագ հասնել լավ մարզավիճակի, այլեւ ձերբազատվել սթրեսից ու անհանգստությունից: Պա-

րապմունքի ընթացքում պետք է ձգտել ընկնվել մտքերի գիրկը, այլ գիտակցորեն ապրել պահը. ուշադրություն դարձնել, թե ինչպես են ուսերը հպվում գետնին վազքի կամ քայլքի ժամանակ, եւ կենտրոնանալ շնչառության ռիթմի վրա՝ հետեւելով, թե ինչպես է աստիճանաբար այն դառնում ավելի խորքային: Այդ ամենը կօգնի հանգստացնել տագնապային մտքերը եւ ամրացնել մարմինն ու բանականությունը:

Ֆիզիկական վարժությունները կարող են արդյունավետ բուժում լինել թեթեւ կամ չափավոր ընկճախտի դեպքում: Օրվա մեջ ընդամենը 15 րոպե տեւողությամբ վազք կամ մեկ-ժամյա քայլք կարող են նվազեցնել դեպրեսիվ փուլերի ռիսկը 26 տոկոսով: Սպորտը թեթեւացնում է դեպրեսիայի ախտանիշները (հնարավոր է դրանք այն ախտանիշներն են, ինչն զգում եք հիմա. անքնություն կամ քնկոտություն, ախորժակի բացակայություն, քաշի կտրուկ փոփոխություն, տրամադրության անկումներ, հաճույք ստանալու անկարողություն, անտարբերություն եւ այլն) եւ նվազեցնում է դրանց կրկնվելու հավանականությունը հետագայում: Երբ պարապում ենք, մեր ուղեղում կատարվում են զարմանալի բաներ, ինչպիսին են նեյրոնների զարգացումը եւ բորբոքման նվազումը, որն իր հերթին նվազեցնում է սթրեսի մակարդակը եւ տալիս է համազուտի զգացողություն: Ֆիզիկական վարժությունները կարելի է օգտագործել նաեւ ուշադրությունը շեղելու համար, որպեսզի չեղվել բացասական մտքերից:

Սթրեսը կարող է ուժեղ վնաս հասցնել ֆիզիկական եւ հոգեկան առողջությանը: Օրինակ՝ մկանային լարվածությունը, պարանոցի եւ ուսերի մասերում ցավերը, զարկերակի արագացած հաճախականությունը, աղիների հետ կապված խնդիրները կարող են սթրեսի հետեւանք լինել: Սպորտն օգնում է հաղթահարել նույնիսկ սթրեսը: Սկզբնական շրջանում հնարավոր է, որ դժվար լինի գտնել մոտիվացիա, բայց պետք է հիշել, որ առաջին հերթին դուք դա անում եք ձեզ համար: Ֆիզիկական վարժությունները մեր այն դրան բանալին են, որը ստանում է դեպի երջանիկ ու առողջ զգալուն: Երբ մարմինը թուլանում եւ հանգստանում է, սկսում է բանականությանը դրական ազդանշաններ հաղորդել, որոնք միտված են տրամադրության լավացմանը, ինչն էլ սթրեսի ցածր մակարդակով կամ էլ դրա բացակայությամբ կյանքի հիմքն է:

Անկախ նրանից, թե հոգեկան առողջության հետ կապված ինչ խնդիրների եք բախվում, համակարգված պարապմունքները բարձրացնում են հոգեբանական կայունության աստիճանը, դարձնում են սթրեսակայուն, օգնում են պահպանել հանգստություն դժվար օրերին, բարելավում են տրամադրությունը, հոգեկան բարեկեցությունը եւ ընդհանրապես կյանքի որակը: Ուստի պետք չէ ժամանակ կորցնել, այլեւ հստակ որոշել ու սկսել հաճախել նախընտրած մարզումներին:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀՈՒՍԱՐԱՐ Հիմնադիր՝ ԽՍԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ Է-մեյլ: gorcert@mail.ru: www.lusarar.info Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է «Լիմոն» ՄՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրությանը՝ 24.05.2024թ.: